281
4-19

816-162

Изъ Калькутты (въ Индіи) въ библіотеку Лазаревскаго Института. 485/6.

# ԿԱՅՍԵՐԱԿԱ՛Ն ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆՔ

'Ի ՊԷՏՍ

ՍՐԲՈՅՆ ԷՋՄԻԱԾՆԻ։

---

'Ի ԿԱԼԿԱԹԱ

'Ի Սէնչէօն Յօհաննուբի,

1840

2004

281
4-19

# ԿԱՅՍԵՐԱԿԱ՛Ն

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆՔ

## ’Ի ՊԷՏՍ

## ՍՐԲՈՅՆ ԷՋՄԻԱԾՆԻ։

---

’Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՏԵԱՌՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ՝ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԵՒ ՅԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ԽԱՉԱՏՐՈՅ՝ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ՎԱՆԱՑ ՍՐԲՈՅ ԱՄԵՆԱՓՐԿՉԻՆ ՈՐ ’Ի ՋՈՒՂԱՅ։

---


’Ի ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆԻՆ։

’Ի ԿԱԼԿԱԹԱ

’Ի Սէնթեան Յունվարէ

1840



կց.

ու. 3922

Գիտէ նա զե՛րբ հատուցել իւրաքանչիւր ումեք զպատշաճն և զվայելուչն։

ՈՎՐԱՏԻՈՍ․

Արդարութիւնն է հաստատութիւն տալոյ ումեք ինչ՝ զոր իւրայն տան օրէնք։

ԿԻԿԵՐՈՆ․

11159
Им. А. Мясникян
3607
38

ԱՌ

ԵՐԵՔԵՐԱ՛ՆԵԱ՛Ն ՍՐԲԱԶ՛ՆԱԿԱՏԱՐ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ՝

ՏԷՐ ՏԷՐ

# ՅՈՎՀԱՆՆԷՍ

ՆՈՒԷՐ ԻՄՆ ՊԱՏՈՒՈՅ ՄԱՏՈՒՑԱՆԷ

ՈՐԴԻԱԿԱՆ ԽՈՆԱՐՀՈՒԹԵԱՄԲ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՎԴԱԼԵԱՆՑ՝

ՎԱՐԺԱՊԵՏ 'Ի ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆԻՆ·

# Ա Զ Դ։

Զձեռագիր օրինակ այսոցիկ Կարգադրութեանց՝ ունելով 'ի Ճակատուն զվճռողականն FIAT, այսինքն՝ ՀԵՂԻՑԻ՛Ն Կայսերական՝ ստացայ յումեմնէ Հայրենասէր բարեկամէ բնակելոյ 'ի Մադրաս։ Զոր և ըստ խնդրոյ ոմանց բարետենչ մերազնէից արկեալ 'ի մամուլ՝ հանի 'ի լոյս 'ի ծանօթութիւն Հայկազանց բնակելոց յայսմ մայրաքաղաքի և 'ի կողմանս կողմանս Հնդկաստանի։ Որոց և զանձն պարտապան համարեալ՝ հոգւով չափ ջանացայ՝ որչափ իմովսանն՝ զերծ 'ի վրիպակաց զտպագրութիւնն ընծայել։ Որոյ զկնի ծանեայ նա և զի այս տետրակ զառաջինն տպեցաւ 'ի ձը Էջմիածին, սակայն ցաւ է մեզ զի չեհաս 'ի ձեռս մեր աստ 'ի տպագրել օրինակաց անտի և ո՛չ մի։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՎԴԱԼԵԱՆՑ։

Ի Նախագաղափարին սեփական ձեռամբ Նորին Կայսերական Մեծութեան մակագրեալ է. ԵՂԻՑԻ ԸՍՏ ԱՅՍՄ.

Ի Ս. Պետերբուրգ, ՚ի 11 Մարտի, 1836.

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆ.

Յաղագս կառավարութեան գործոց Լուսաւորչական Հայոց Եկեղեցւոյ ՚ի Ռուսաստան։

## ԳԼՈՒԽ 1։

Յաղագս ընդհանուր իրաւանց և արտօնութեանց Լուսաւորչական Հայոց Եկեղեցւոյ.

### Յօդուած 1։

Լուսաւորչական Եկեղեցին Հայոց ՚ի կայսերութեան Ռուսաց հաւասար այլոց օտարազգի դաւանութեանց՝ կայ ընդ Ամենողորմ հովանաւորութեամբ կայսեր.

### Յօդուած 2։

՚Ի բոլոր կայսերութեան Ռուսաց Թոյլատրի ազատ դաւանութիւն հաւատոյ ըստ ծիսի Լուսաւորչական Եկեղեցւոյ Հայոց՝ այնպէս զի անդամք նորին ըստ զօրութեան ընդհանուր Թագաւորական օրինադրութեանց զգուշասցին միշտ ՚ի զլանալոյ զպատկանեալս յարգանս առ այլ հաւատս. որք ունին զազատ դաւանութիւն ՚ի կայսերութեանս մանաւանդ ՚ի նորահաւատութենէ, (Պրօզելիտիզմ), (*) որ խստիւ արգելեալ է օրինօք տէրութեան։

### Յօդուած. 3.

Մատակարարութիւն Ածային պաշտամանց և կառավարութիւն հոգևորական գործոց Եկեղեցւոյ Լուսաւորչական Հայոց՝ յանձն լինի ուխտի Եկեղեցականաց նորին ըստ զօրութեան օրինաց և կարգադրութեան նոյն Եկեղեցւոյ։

### Յօդուած 4։

Եկեղեցականք Լուսաւորչական Հայոց յամենայնի՝ որք միանգամ վերաբերին առ պարտս հոգևոր պարտաւորութեան՝ կան միայն ընդ վերատեսչութեամբ հոգևոր իշխանութեան իւրեանց՝ զորմէ և կախին։

### Յօդուած. 5։

Հոգևոր գործք ամենայն Եկեղեցական պաշտօնէից Լու-

ծաւորչական Եկեղեցւոյ Հայոց Ռուսաստանեայց ենթարկին քննութե և վճռոյ Հոգևոր ատենից այնր Եկեղեցւոյ. իսկ ՚ի վէճս և յայլ քաղաքական գործս՝ ընդ իւրեարս կամ ընդ այլանձինս՝ որք ո՛չ են յեկեղեցականաց լուսաւորչական Հայոց, նա և ՚ի քրէական (Է) և յայլ ամ գործս, ենթարկին նոքա վերատեսչութե քաղաքական դատարանաց ըստ հասարակեալ կանոնի, նշանակելով զմի ոք ՚ի հոգևորական կողմանէ դեպուտատ (Գ) ՚ի դիպուածս, ուր օրէնք հրամայեն գտանիլ դեպուտատին վասն հաղորդակցութե ՚ի քննութե նոյն գործոյն:

Յօդուած. 6:

Եկեղեցականք լուսաւորչական Հայոց Ռուսաստանեայց ազատ են յամենայն հարկատուութեանց և ՚ի քաղաքական պահանջողութեաց.

Յօդուած. 7:

Սրբազնագործ պաշտօնեայք (Դ) լուսաւորչական Եկեղեցւոյ Հայոց՝ կանայք և զաւակունք նց՝ յոչինչ դիպուածս ենթարկին մարմնաւոր պատժոյ:

Յօդուած. 8:

Եկեղեցական անդամք լուսաւորչական Հայոց Ռուսաստանեայց՝ հաւասար ամ հաւատարիմ հպատակաց կայսերական մեծութե՝ իրաւունս ունին ստանալոյ զամենայն պարգևս ՚ի նորին կայսերական մեծութե յաղագս ջերմեռանդութե իւրեանց և արդիւնաւորութեց:

Յօդուած. 9:

Եկեղեցիք լուսաւորչական Հայոց Ռուսաստանեայց իրաւունս ունին տիրելոյ անշարժ կալից. այլ սակայն ո՛չ այլազգ կարեն ՚ի ձեռս բերել կամ օտարացուցանել զայնս. բայց եթէ բարձրագոյն բարեհաճութե կայսեր՝ որ խնդրի ՚ի ձեռն նախարարութե ներքին գործոց ըստ սահմանեալ կարգին.

# ԳԼՈՒԽ. 2։

## Յաղագս Ծայրագոյն Պատրիարքին Էջմիածնի։

### Յօդուած. 10։

Գլխաւոր կառավարութիւն լուսաւորչական Եկեղեցւոյ Հայոց և ծայրագոյն տեսչութիւն Եկեղեցականաց նորին և Ճշդիւ կատարման կանոնաց և ծիսից այսր դաւանութեան՝ պատկանին Պատրիարքին Էջմիածնի. սմա գործակից լինի յամի Էջմիածնի լուսաւորչական Հայոց Սինհոդոսն. բայց Պատրիարքն յոչինչ դէպս կարէ աւանդել ոչ Սինհոդոսին ոչ այլում իմիք ատենի կամ անձին՝ զիշխանութիւն՝ զիւրաւունս և զարտօնութիւնս՝ սեպհականեալս իւրում աստիճանի։

### Յօդուած. 11։

Ծայրագոյն Պատրիարքն Էջմիածնի ընտրի յողջոյն ազգէ լուսաւորչական Հայոց ըստ կարգին սահմանելոյ առ այս։

### Յօդուած. 12։

՚Ի դատարկանալ տեղւոյ ծայրագոյն Պատրիարք կաթուղիկոսին ամ Հայոց՝ լուսաւորչական Սինհոդոսն Էջմիածնի առաքէ գծանուցողական նամակս յամ վիճակս լուսաւորչական Հայոց. որք են՝ թէ ՚ի Ռուսաստան և թէ արտաքոյ սահմանաց նորին. նա և նշանակէ զաւուրս միջոյ առ ընտրութիւն նորոյ Պատրիարքի։

### Յօդուած. 13։

Իւրաքանչիւր վիճակ լուսաւորչական Հայոց առ ընտրութիւն Պատրիարքի նշանակէ զերկուս պատգամաւորս՝ (դեպուտատ) (*) զմի Եկեղեցական և զմի աշխարհական։ Պատգամաւորն Եկեղեցական պարտի լինել կամ նոյն ինքն Թեմակալ Առաջնորդն, կամ այլ ոք Եկեղեցական նշանակեալ ՚ի նմանէ. իսկ աշխարհական պատգամաւորն ընտրի յամ իշխանաւորաց՝ ՚ի Հարիւրապետաց (յուզբաշեաց) ՚ի մէլիքաց և յայլոց պատուաւոր աշխարհական անդամոց լուսաւորչական Հայոց Եկեղեցւոյ՝ որոց են իրաւունք ընտրութեան ըստ վաղեմի ծիսի այսր Եկեղեցւոյ։

### Յօդուած. 14։

Այսպիսի ընտրեալ պատգամաւորք եթէ չկարիցեն

ներկայանալ անձամբ ՚ի վանս Էջմիածնի նշանակեալ ժամանակին վասն ընտրութեան Պատրիարգի, ունին իրաւունս յայտնել գրութեամբ զդատողութիւն իւրեանց՝ հասուցանելով զայն ՚ի Սինոդոսն Էջմիածնի:

### Յօդուած. 15:

Բայց ՚ի պատգամաւորաց (դեպուտատ) մասնակցին ընտրութեան Պատրիարգի ամենայն անդամք լուսաւորչական հայոց Սինոդոսին Էջմիածնի, և եօթն երիցագոյն եպիսկոպոսունք՝ որք յայնժամ գտանիցին յԷջմիածին. իսկ ՚ի դիպուածս պակասութեան եպիսկոպոսաց, զայն թիւ լնուն երիցագոյն վարդապետք տեղւոյն:

### Յօդուած. 16:

Նոյն ընտրութիւն յառաջանայ յԷջմիածին ՚ի մայր Եկեղեցւոջ սրբոյն Գրիգորի լուսաւորչին ճիշդ պահպանութեամբ ծիսից սահմանադրելոց ՚ի լուսաւորչական Եկեղեցւոյն հայոց առ այս:

### Յօդուած. 17:

Զկնի հաւաքման ձայնից բոլոր ժողովականացն և հասու լինելոյ գրաւոր դատողութեանցն հասելոց ՚ի Սինոդոսն ըստ զօրութեան 14 երրորդ յօդուածոյն,, չորեքին առաջագոյնք ըստ առաւելութեան ձայնիցն տուելոց ՚ի նպաստ իւրեանց ճանաչին անուանք իւրեանց ընտրեալ լինելոյ ՚ի կանդիդատ. (գ) իսկ ՚ի դիպուածս հաւասարութեան ձայնի, վիճակն որոշեսցէ՝ թէ որք պարտին համարել առաջագոյնք. ՚ի նոցանէ բոլոր ժողովականք առնեն ընտրութիւն երկուց կանդիդատաց, ՚ի պաշտօն ծայրագոյն Պատրիարգի:

### Յօդուած. 18:

Զկնի այսր ընտրութեան ժողովն առաքէ զերիս պատգամաւորս յանդամոց իւրոց առ գլխաւոր կառավարիչն վրաստանի՝ կովկասեան և յայնկոյս կովկասու եղեալ նահանգաց, որ յաղագս երկուց կանդիդատաց ընտրելոյ առաջի առնէ Նորին կայսերական մեծութեան ՚ի բարեհաճութիւն, ընդ ձեռն Նախարարութեան ներքին գործոց:

### Յօդուած 19:

Թագաւոր կայսրն նշանակեալ զծայրագոյն Պատրիարգն Էջմիածնի՝ զկաթողիկոսն հայկազանց՝ ամենողորմածա-

բար յիւրմէ նմա զառանձին հրովարտակ վասն այսր աստի-ճանի. և հրամայէ զկնի երդնլոյն լինել հաւատարիմ ա-գահն ա̄մ Ռուսաց, կատարել զօծումն նորա ըստ վաղեմի ծիսի և սովորութեան Լուսաւորչական Եկեղեցւոյ Հայոց։

Յօդուած. 20։

Պատրիարգն էջմիածնի կրէ զնոյն տիտղոս (պատուանուն) զոր ունէին 'ի վաղնջուց ծայրագոյն Պատրիարգ կաթողիկո-սունքն Հայկազանց։

Յօդուած. 21։

Յամենայն պաշտամունս 'ի մէջ Եկեղեցւոյ Լուսաւոր-չական Հայոց՝ անուն Պատրիարգ կաթուղիկոսին յիշատակի անմիջապէս զկնի կայսերն ամենայն Ռուսաց և Օգոստափառ-տան նորա։

Յօդուած. 22։

Համաձայն նախնի սովորութեան կաթողիկոսն յելա-նելն իւրում 'ի կաթուղիկոսարանէն կամ 'ի պալատէ էջմի-ածնի իրաւունս ունի յուղարկիլ 'ի պատուաւոր պահանոր-դաց՝ որ 'ի Հայոց պատկանելոց վանիցն էջմիածնի, յամենայն անդամոց հոգեւորականութեան և յերկուց Եկեղեցական աս-տիճանաւորաց՝ յորոց մին կրէ զգաւազանն կաթուղիկոսական և միւսն զխաչվառն։

Յօդուած. 23։

Ըստ զօրութեան վաղեմի օրինաց Լուսաւորչական Ե-կեղեցւոյ Հայոց Պատրիարգն էջմիածնի իբրև ծայրագոյն կաթողիկոս Հայկազանց՝ ինքն միայն ունի իրաւունս եփելոյ և օրհնելոյ զս̄բ միւռոնն վ̄ս ա̄մ Եկեղեցեաց այսր դաւանութեան։

Ծանօթութիւն. Բաշխումն ս̄բ միւռոնի 'ի Պատրիարգէ և 'ի նուիրակաց առաքելոց 'ի նմանէ լինի ըստ ամի ձրիաբար։

Յօդուած. 24։

Պատրիարգն էջմիածնի իբրև հոգեւոր հովուապետ Հայկազանց ձեռնադրէ զթեմակալ առաջնորդս և զայլ ա̄մ եպիսկոպոսունս Լուսաւորչական Եկեղեցւոյ Հայոց՝ դիտե-լով զի համեմատ վաղեմի կանոնաց նորին Եկեղեցւոյ մի բազ-մասցի թիւ անթեմ եպիսկոպոսաց առանց յայտնի հարկա-ւորութեան։

### Յօդուած. 25։

Պատրիարգն հեռևելով վաղեմի կանոնադրութեանց լուսաւորչական Եկեղեցւոյ Հայոց՝ և հասու լեալ կանխակարծեաց Սինհոդոսին էջմիածնի՝ տայ զվախճանական վճիռն՝ պարզ հոգևոր գործոց վերաբերելոց առ վարդապետութիւնս հաւատոյ, առ պաշտամունս Եկեղեցւոյ և առ այլս սոյնպիսիս։

### Յօդուած. 26։

Ծայրագոյն Պատրիարգն էջմիածնի ունի իրաւունս վարձատրելոյ՝ համեմատ կարգաւորութեան լուսաւորչական Եկեղեցւոյ Հայոց, զառաքինի և զօգտակար անդամս ուխտի Եկեղեցւոյն Հայոց, լանջական խաչիւք, կամիլաւկաւ, կոչեցեալ գլխարկօք և արախչնօք։

### Յօդուած. 27։

Պատրիարգն էջմիածնի իբրև ընդհանրական հովիւ որ հովուէ հայկազանց՝ ըստ օրինակի Հայրապետին Ներսիսի՝ Շնորհալի կոչեցելոյ (է) ընդ ժամանակս ժամանակս առաքէ զՀայրապետական կոնդակս հանդերձ օրհնութեամբ իւրով առ լուսաւորչական հայս ամենայն տեղեաց և կողմանց, յորդորելով զնոսա առ խաղաղական և առաքինի կեանս, և առ հնազանդութիւն օրինաւոր իշխանութեանց՝ համաձայն կանոնաց սրբոյ Աւետարանին։

### Յօդուած. 28։

՚Ի բազմիլ կայսերաց ամենայն Ռուսաց յաթոռ նախահարց՝ Պատրիարգն էջմիածնի առաքէ զմի ոմն ՚ի նախապատուանդամոց ուխտի լուսաւորչական Հայոց Եկեղեցականաց՝ մատուցանել նորին կայսերական մեծութեան զամենահպատակ շնորհաւորութիւն՝ խնդրելով ամենողորմ բարեհաճութիւնն յաղագս առաջիկայ գտանելոյ ՚ի հանդիսի թագադրութեան՝ իւրեան և կամ ՚ի դէպս անհնարութեան՝ դեպուտատի իւրում։

### Յօդուած. 29։

Համաձայն կանոնաց լուսաւորչական Եկեղեցւոյ Հայոց ծայրագոյն Պատրիարգ կաթուղիկոսն զհաստատուն բնակութիւն իւր ունի ՚ի վանս էջմիածնի։ Յորժամ՝ հարկաւոր համարի նա հեռանալ ՚ի վանից անտի աւելի քան զչորս ամիսս հար-

կամէ առ այս ՚ի ձեռն գլխաւոր կառավարչին վրաստանի կովկասեան և յայնկոյս կովկասու եղեալ նահանգաց՝ և ՚ի ձեռն նախարարութեան ներքին գործոց՝ զբարձրագոյն հաճութիւն նորին կայսերական մեծութեան։

Յօդուած. 30։

Պատրիարգն էջմիածնի ունի իրաւունս տալոյ զարձակուրդ՝ որպէս անդամոց լուսաւորչական հայոց Սինոդոսի՝ նոյնպէս և թեմական առաջնորդաց և ընդհանրապէս ամ եպիսկոպոսաց այսր դաւանութե չորեքամսեայ ժամանակաւ. յերկարատև արձակուրդս և արտաքոյ սահմանի (այսր տէրութե) Պատրիարգն արձակէ զնոսա բարձրագոյն կամօք կայսերն. յանդամոց Սինոդոսի ոչ աւելի քան երկուք կարեն արձակիլ ՚ի միում ժամանակի։

Յօդուած. 31։

Պատրիարգ կաթուղիկոսն իբրև անմիջական պետ վանաց էջմիածնի անօրինէ զգործս նորին սեպհական նկատողութբ իւրով՝ ըստ ճիշտ զօրութե Եկեղեցական կանոնաց։

Յօդուած. 32։

՚Ի վախճանել Պատրիարգ կաթուղիկոսին՝ անյապաղ ժողովի հայոց լուսաւորչական Սինոդոսն էջմիածնի առ ՚ի զգուշանալ որպէս թղթոյն եղելոյ առ նմա և վերաբերելոյ առ գործս կառավարութե և Եկեղեցւոյ՝ նոյնպէս և ընդ տեսչութբ նորին եղեալ եկեղեցական գոյից։

Ծանօթութիւն։ Պատրիարգն իշխանէ անօրինել զսեպհական գոյս իւր ըստ իւրում հաճութեն. եթէ չիցէ արարեալ կտակ՝ գոյքն անցանեն առ օրինաւոր ժառանգս նորին. իսկ եթէ չիցեն նմա ժառանգք՝ այն կայք հաշուին ընդ գոյս լուսաւորչական Եկեղեցւոյ հայոց։

## ԳԼՈՒԽ. 3.

### Յաղագս Լուսաւորչական Հայոց Սինհոդոսին Իշխանութեան.

### Յօդուած. 33.

Լուսաւորչական Հայոց Սինհոդոսն Էջմիածնի՝ ընդ նախագահութեամբ ծայրագոյն Պատրիարգ կաթողիկոսին՝ բաղկանայ ՚ի չորից արք եպիսկոպոսաց կամ յեպիսկոպոսաց, և նոյնաթիւ վարդապետաց՝ որք զհաստատուն բնակութիւն իւրեանց ունին յԷջմիածին.

### Յօդուած. 34.

Առ իւրաքանչիւր տեղի անդամոց Լուսաւորչական Հայոց Սինհոդոսին՝ Պատրիարգն ՚ի ձեռն գլխաւոր կառավարչին վրաստանի կովկասեան և յայնկոյս կովկասու եղեալ նահանգաց, և ՚ի ձեռն նախարարութեան ներքին գործոց առաջի առնէ Թագաւոր կայսերն զերկուս կանդիդատս.

### Յօդուած. 35.

Առ պարագայս գործողութեան Հայոց Լուսաւորչական Սինհոդոսին ՚ի մասին կառավարութեան՝ վերաբերին.

1. Դիտողութիւն ՚ի վերայ գործառնութեանց ամ ատենից և պաշտօնատար անձանց՝ ստորադրելոց այսմ Սինհոդոսի.

2. Վերատեսչութիւն բարեկարգութեանց նորին ստորադրեալ վանորէից Եկեղեցեաց, դպրոցաց և Աստուածահաճոյ շինուածոց.

3. Վերատեսչութիւն կարգի կառավարութեան գոյից Լուսաւորչական Եկեղեցեաց Հայոց.

4. Նախընթաց քննութիւն գործոց վերաբերելոց առ շինութիւն վանորէից, Եկեղեցեաց և դպրոցաց և խնդրումն առ այն՝ ՚ի ձեռն գլխաւոր կառավարչին վրաստանի կովկասեան և յայնկոյս կովկասու եղեալ նահանգաց, և ՚ի ձեռն նախարարութեան ներքին գործոց բարձրագոյն հրամանի կայսեր.

5. Թոյլտուութիւն հայկազանց Լուսաւորչական Եկեղեցւոյ յաղագս վիճակ եղելոց ընդունել զկարգ Եկեղեցական և նուիրել զանձինս ՚ի վանականութիւն.

6. Թոյլտուութիւն մերկանալոյ զվանականութիւն և ընդհանրապէս զհոգևորական կարգ.

7. Վախճանական վերահասութիւն գործոց ամենայն խնդրական բանից յաղագս մտանելոյ յամուսնութիւն.

8 Թոյլտուութիւն ժողովելոյ 'ի վիճակաց զկամաւոր նուէրս յօգուտ վանորէից՝ Եկեղեցեաց՝ դպրոցաց և Աստուածահաճոյ շինուածոց այլոց վիճակաց.

9. Դիտողութիւն 'ի վերայ խնամակալութեան որբոց և այրեաց սրբազնագործ և ստորին Եկեղեցական պաշտօնէից.

10 Առաջարկութիւն կարծեաց՝ յորժամ կաթողիկոսն նախանշանակէ յաստիճան եպսութեան զեկեղեցականս առանց կարգելոյ զնոսա միանգամայն 'ի պաշտօն Թեմակալի:

11. Առաջի առնել Պատրիարգին զդատողութիւնս իւր զայնց Հոգևորականաց՝ զորս կամին առաքել 'ի բաշխումն սրբոյ մեռոնի:

12. Բացայայտութիւն կարծեաց առ հարցմունս առաջարկեալս 'ի Պատրիարգէն՝ յեզրակացուցանել.

13. Պահպանութիւն ճիշդ ցուցակաց լուսաւորչական Հայոց ամենայն Եկեղեցեաց՝ վանորէից՝ դպրոցաց և Աստուածահաճոյ շինուածոց՝ որ 'ի սահմանս Ռուսիոյ՝ առանձինն ըստ իւրաքանչիւր վիճակի.

14. Պահպանումն նոյնպիսի ցուցակաց յաղագս ամենայն որ 'ի Ռուսաստան Եկեղեցականաց՝ ամուսնացելոց և կուսակրօնից լուսաւորչական Եկեղեցւոյ Հայոց՝ և այլոց անձանց պատկանելոյ առ տեսչութիւն Սինհոդոսին:

15. Պահպանութիւն պատկանաւոր մատենից յաղագս ամենայն գոյից վանորէից և Եկեղեցեաց լուսաւորչական Հայոց 'ի սահմանին Ռուսաստանի.

16. Առաջի առնել ամի ամի նախարարութեան ներքին գործոց 'ի ձեռն գլխաւոր կառավարչին վրաստանի կովկասեան և յանկոյս կովկասու եղեալ նահանգաց՝ զտարեկան ծանօթութիւնս զառարկայիցն նշանակելոյ 'ի յօդուածն՝ 13. 14. և 15. երորդ՝ զլիակատար տեղեկութիւնս յաղագս ծնելոց՝ մեռելոց և պսակելոց որ 'ի բոլոր լուսաւորչական Հայոց վիճակս Ռուսաստանի՝ զընդհանուր տարեկան հաշուէ.

Յօդուած 36:

'Ի դատաստանական մասին քննութեան և վճռա-

հատութեան Լուսաւորչական Հայոց Սիւնհոդոսին էջմիածնի՝ պատկանին։

1. Գանգատանք զանդամոց նոյն ինքեան Սիւնհոդոսին։

2. Գանգատանք զթեմական առաջնորդաց Լուսաւորչական Հայոց վիճակաց, և զվիճակային (կոնսիստորեայից) հոգևոր ատենից.

3. Քննութիւն անկանոն գործողութեանց անդամոց նոյն Սիւնհոդոսի և թեմական առաջնորդաց։

4. Ամենայն գործք քննեալք ՚ի Լուսաւորչական Հայոց վիճակային հոգևոր ատեանս, և մուծեալք ըստ բողոքանաց ՚ի Սիւնհոդոս էջմիածնի՝ յաղագս պսակաց, և սրբազնագործ և ստորին Եկեղեցական պաշտօնէից յանցաւորութեանց, ոչ պատկանելոց մարմնաւոր դատարանաց յաղագս վիճմանց նոցա ընդ իրեարս և այլն։

## Յօդուած. 37.

Լուսաւորչական Հայոց Սիւնհոդոսն էջմիածնի ը̅ անմիջական վերատեսչութեամբ ծայրագոյն Պատրիարգին՝ տայ գլխաւորական վճիռ ամ̅ գործոց վերաբերելոց առ Վարդապետութիւն հաւատոյ, առ Եկեղեցական պաշտամունս, ծէսս և պասս, և առ այն յանցաւորութիւնս Եկեղեցականաց՝ որք ոչ պատկանին քննողութեան մարմնաւոր դատարանաց։ Այս Սիւնհոդոս ըստ գործոց Լուսաւորչական Եկեղեցւոյ Հայոց Ռուսաստանեայց՝ կայ ընդ վերատեսչութ̅ե կառավարիչ Սինկղիտոսին (Սէնաթին) և Նախարարութեն ներքին գործոց, հաւասար այլոց ծայրագոյն հոգևոր ատենից օտարազգի դաւանութեանց։

## Յօդուած. 38.

Վճիռք ըստ գործոց՝ որ յաղագս գանգատանաց զթեմական առաջնորդաց և զանդամոց Լուսաւորչական Հայոց Սիւնհոդոսին, նոյնպէս և զանկանոն գործողութեանց նց՝ եթէ այսոքիկ Եկեղեցականք դատապարտին ՚ի պատիժ ինչ՝ ոչ այլագածին ՚ի կատար, բայց եթէ զկնի յայտնելոյ բարձրագոյն հրամանի կայսեր առ այն՝ ը̅ ձեռն Նախարարութեն ներքին գործոց։

## Յօդուած. 39.

Լուսաւորչական Հայոց Սիւնհոդոսն էջմիածնի ա-

ռաջի առնէ Նախարարութեան ներքին գործոց 'ի ձեռն գլխաւոր կառավարչին վրաստանի կովկասեան և յայնկոյս կովկասու եղեալ նահանգայ՝ զամ գործոց և դիպուածոց՝ որոց վասն խնդրի վճիռ նորին կայսերական մեծութեան կամ՝ որոց վասն հարկաւոր են կարգադրութիւնք նախարարութեան. նա և զգործոց՝ որք պահանջեն զհաղորդակցութիւն ընդ այլոց նախարարութեանց, և ընդ գլխաւոր կառավարչաց առանձին մասանց թագաւորական կառավարութեան. նոյնպէս և զխնդրոց՝ որք կարեն ծագել 'ի մէջ Սինհոդոսի հայոց և հոգևոր իշխանութ օտարազգի դաւանութեանց. և վերջապէս զդատաստանական երկբայութեանց՝ թէ արդեօք այս ինչ գործ վերաբերին առ տեսչութիւն նր, թէ ոչ. իսկ զգործոց՝ յորս հարկաւորին հաղորդակցութիւնք ընդ ատենականոյ. (ըէներալ գուբեռնաթօրայ) ընդ նահանգապետաց (գուբեռնաթօրայ) և ընդ այլոց տեղական կառավարչութեանց, Լուսաւորչական հայոց Սինհոդոսն էջմիածնի առաջի առնէ գլխաւոր կառավարչին վրաստանի կովկասեան և յայնկոյս կովկասու եղեալ նահանգայ.

Յօդուած. 40.

Լուսաւորչական հայոց Սինհոդոսն էջմիածնի վարի ըստ իրաւանց (կոլլէղիայից) (ա) բայց յամ պարզ հոգևորական գործս Պատրիարգն ունի զձայն վճռողական. իսկ յայլ գործս՝ եթէ հաւասար են ձայնք անդամոյն՝ ձայն նր իբրև նախագահի՝ է հակամէտ. (բ).

Յօդուած. 41.

'Ի քննութեան իւրայ՝ յորս Պատրիարգն էջմիածնի ունի զձայն վճռողական՝ չգտանի անձամբ 'ի Սինհոդոսի. այլ հաստ եղեալ եզրակացութեանց Սինհոդոսին յօրագրութիւնս մատուցեալս նմա, տայ ըստ այնմ զիւր վճիռ.

Յօդուած. 42.

Յորժամ Պատրիարգն էջմիածնի ոչ գտանի անձամբ 'ի Լուսաւորչեան հայոց Սինհոդոսի՝ զտեղի նր ունի երիցագոյն յարքեպիսկոպոսաց կամ յեպիսկոպոսաց անդամոց այսր Սինհոդոսի։ Նա վարի ամ իրաւամբ նախագահի յայնոսիկ դէպս միայն, յորժամ Պատրիարգն ինքնին չկարէ ներկայ գտանիլ 'ի պատճառս հիւանդութեան կամ բացակայ-

ութեն յէջմիածնէ. իսկ պարզ հոգեւորական գործք՝ յորս Պատրիարգն ունի զձայն վճռողական՝ յոչինչ դէպս կարեն վճռիլ առանց Պատրիարգին ՝ի ժամ պարապութեն Պատրիարգական աթոռոյն։ Վճռահատութի սոյնատեսակ գործոց յետաձգի ցընտրութի նորոյ Պատրիարգին.

Յօդուած. 43։

Կարգ գործառնութե լուսաւորչական հայոց Սինհոդոսին էջմիածնի, իրաւունք և պարտաւորութիւնք անդամոց և աստիճանաւորաց դիւանատան նորին, սահմանադրին ընդհանուր կարգադրութեք՝ զորս ունին կոլլեգիայք։

Յօդուած. 44։

Սինհոդոսն էջմիածնի ժողովի երիցս կամ գոնէ երկիցս յեօթնեկի նկատմամբ գործոց մտելոց անդր։

Յօդուած. 45։

՝Ի Սինհոդոսն էջմիածնի լինի առանձին Պրոկուրոր (*) կարգեալ ՝ի կառավարիչ Սինկղիտոսէն (սէնաթէն) յաստիճանաւորաց՝ որք գիտեն զլեզուս Ռուսաց և Հայոց. նմա նշանակի ռոճիկ յարքունի գանձարանէն համեմատ ի բուն պաշտաման։

Յօդուած 46։

Պրոկուրորն լուսաւորչական հայոց Սինհոդոսին էջմիածնի ՝ի գործողութիս իւր վարի ընդհանրական կանոնադրութեամբ՝ որ վասն պարտաւորութե պրոկուրորի։ Սոյնպէս ունի զհաւասար հսկողութի ՝ի վր դատաստանական և կարգադրական գործոց յառաջացելոց ՝ի Սինհոդոսի անդ, և առաջիկայ գտանի յընտրութե ծայրագոյն Պատրիարգին էջմիածնի։ Զդատաստանական գործոց պրոկուրորն առաջի առնէ (մինիստերութե իւստիցի) նախարարութեն իրաւանց. իսկ զայլոց գործոց՝ նախարարութե ներքին գործոց։ Նա նոյնպէս ըստ գործոյն լուսաւորչական հայոց Սինհոդոսին էջմիածնի տանէ առաջարկութիւնս և առ գլխաւոր կառավարիչն վրաստանի կովկասեան և յայնկոյս կովկասու եղեալ նահանգաց.

Յօդուած. 47։

Լուսաւորչական հայոց Սինհոդոսն էջմիածնի ունի զառանձին կանցելարին՝ որ կոչի ինքն Սինհոդոսն յեկե-

ղեցական կամ յաշխարհական անձանց՝ որք իցեն հմուտ հաշուարարութեան, և նշանաւոր բարեբարոյութեամբ և անշահախնդրութեամբ։ Այս գանձապետ ունի ընդ տեսչութեամբ իւրով միայն զգումարս դրամոց զպատկանեալս եջմիածնի լուսաւորչական հայոց Սինոդոսին՝ առանց ձեռնամուխ լինելոյ 'ի գումարս վանիցն եջմիածնի։

Յօդուած. 48։

Գանձապետութիւն լուսաւորչական հայոց Սինոդոսի հաստատեալ լինի ընդունել և պահպանել զամ գումարս պատկանեալս նմին, և ում հարկն է՝ հատուցանել յայնց, սահմանեալ կարգաւն համաձայն կանոնաւոր հրամանագրութեանց հայոց լուսաւորչական Սինոդոսին ըստ զօրութեան օրագրութեանց նորին։

Ծանօթութիւն։ Լուսաւորչական հայոց Սինոդոսն եջմիածնի ամսոյ յամիս առնէ զպրոտոպատշաճ վերահասութիւն ամբողջութեան նմ առ ձեռն գումարաց և հաշուաթղթոց՝ եղելոյ ընդ պահպանութեամբ գանձապետին. և որ ինչ ցուցցէ առ այլ դրի յօրագրութեան։

Յօդուած. 49։

Գանձապետն ունի զպատշաճաւոր տումարս եկամտից և ծախուց նմ դրամոց պատկանելոց լուսաւորչական հայոց Սինոդոսի։ Այսպիսի տումարք ըստ ընդհանուր կարգին պարտին լինել ժապաւինեալ և հաստատեալ կնքով լուսաւորչական հայոց Սինոդոսին և ստորագրութեամբ երկուց անդամոց նորին և Պրոկուրորի։

Յօդուած. 50։

Ամենայն գումարք դրամոց հայոց լուսաւորչական Սինոդոսի և գրաւոր վկայութիւնք եկեղեցական գոյից եղեալք առ գանձապետն՝ պարտին պահպանիլ 'ի սենեկի անդ յառանձին արկեղ՝ որ լինի ժողովն Սինոդոսի։ Արկղ այս փակեսցի երիւք զանազան կղպէօք, և կնքեսցի կնքով լուսաւորչական հայոց Սինոդոսին. մին 'ի բանալեաց կղպէղացն պահպանի առ գանձապետն, իսկ այլքն՝ մին մի առ այնոսիկ երկոսին անդամս Սինոդոսին, որոց յատկապէս յանձնեալ իցէ վերահասութիւն հաշուական գործոց նորին։

Այսոքիկ անդամք յիւրաքանչիւր նուագս բանալոյ զարկղն՝ պարտին առաջիկայ գտանիլ։

Յօդուած. 51։

Գանձապետն ուշադիր լինի զի 'ի Սինոդոսական արկեղ մի Ռուսաց առանց հարկաւորութե մեծամեծ գումարք դրամոց. և առաջի առնէ լուսաւորչական Հայոց Սինոդոսին յաղագս տալոյ զգումարս նորա յաճումն տոկոսեօք ըստ օրինադրեալ կարգի։ Տուչութիւն այն գումարաց 'ի ձեռս մասնաւոր անձանց յորժամ միայն թոյլատրի, յորժամ նոյն Սինոդոսն ճանաչէ զայն շահաւէտ. և այսու կերպիւ հաւատացեալ գումարն մասնաւոր անձին՝ ապահովեալ իցէ հաւատարիմ գրաւականաւ։

Յօդուած. 52։

Դիւանատուն լուսաւորչական Հայոց Սինոդոսի բաղկանայ 'ի մի ատենադպրէ (սեկրետար) յերկուց օգնականաց նորին՝ 'ի Թարգմանէ և 'ի գործադրէ, (էկզէկուտոր) 'ի գործակալէ (արխիւարիւս) և 'ի հարկաւոր թուոյ գրագրաց։ Այսոքիկ աստիճանաւորք կարգին ըստ ընտրութեան Սինոդոսին էջմիածնի հաստատութ̅բ Պատրիարգին։

Յօդուած. 53։

Պրօկուրօրն լուսաւորչական Հայոց Սինոդոսին է 'ի վեցերորդում կարգի. (կլասի) գանձապետն՝ եթէ իցէ նա յաշխարհականաց, յեօթներորդում. ատենադպիրն՝ յութերորդում. գործադիրն և գործակալն՝ յիններորդում. օգնական ատենադպրին և Թարգմանն՝ 'ի տասներորդում, յորչափ մնան նոքա յայսմիկ պաշտամունս. և եթէ չունին ըստ նախկին ծառայութե̅ն կամ ըստ այլոյ տեղեաց զբարձրագոյն աստիճանս։

Յօդուած. 54։

Անդամք Հայոց լուսաւորչական Սինոդոսին էջմիածնի՝ Պրօկուրօրն, գանձապետն և աստիճանաւորք դիւանատան նորին՝ 'ի մտանել 'ի պաշտօն իւրեանց՝ երդնուն ըստ հաստատեալ կանոնի առ 'ի հաւատարմութ̅բ ծառայել նորին կայսերական մեծութ̅ե և առ խկութ̅բ կատարելոյ զպարտաւորութիւնս իւրեանց։

## ԳԼՈՒԽ. 4.

### Յաղագս Եկեղեցական վիճակաց Լուսաւորչական Հայոց Եկեղեցւոյ։

Յօդուած. 55.

Լուսաւորչական Հայոց Եկեղեցիք բաժանին 'ի վիճակս՝ որ կառավարին յարքեպիսկոպոսաց այսր դաւանութեան։

Յօդուած. 56.

'Ի սահմանս Ռուսիոյ գտանին վեց վիճակք Լուսաւորչական Հայոց Եկեղեցւոյ. առաջինն՝ Նախիջեւանայ և Բեսսարաբիոյ. երկրորդն՝ Աստրախանայ. երրորդն՝ Երեւանայ. չորրորդն՝ Վրաստանի. հինգերորդն՝ Ղարաբաղայ. և վեցերորդն՝ Շիրուանայ։

Վիճակին Նախիջեւանայ և Բեսսարաբիոյ պատկանին Լուսաւորչական Հայոց Եկեղեցիքն՝ որ 'ի Ս. Պետերբուրգ, 'ի Մոսկով, 'ի գաւառս Նոր Ռուսիոյ և 'ի նահանգին Բեսսարաբիոյ. Վիճակին Աստրախանայ՝ այլ ամ Լուսաւորչական Հայոց Եկեղեցիք 'ի Ռուսիա՝ բաց 'ի Վրաստանէ և 'ի գաւառայն՝ որ յայնկոյս Կովկասու։ Վիճակին Երեւանայ՝ Լուսաւորչական Հայոց Եկեղեցիք՝ որ 'ի նահանգս Երեւանայ, Նախիջեւանայ, Օրդուպատու և գաւառին Շիրակայ. 'ի սմա անկանի 'ի վիճակէն Ղարաբաղայ և մետրապօլիտութիւն Տաթեւայ հանդերձ բոլոր հօտիւ իւրով։ Առաջնորդ վիճակիս ըստ վաղեմի կանոնադրութեան է նոյն ինքն Պատրիարգն՝ որ կառավարէ զայն 'ի ձեռն յաջորդաց իւրոց. և ունի զնոսա 'ի քաղաքն Երեւան, 'ի Նախիջեւան Հայաստանի. նոյնպէս 'ի Շիրակ և 'ի Տաթեւ։ Վիճակին Վրաստանի պատկանին Եկեղեցիքն Հայոց՝ որք են յատկապէս 'ի Վրաստանի, 'ի գաւառն Գանձակայ (Եղիսաւէտապօլոյ) և 'ի գաւառսն Բօրչալուայ, Ղազախայ, Շամշադինոյ և ը̅ մասին Բամբակաձորոյ, յաշխարհին Տայոց, (Ախալցխայ) յԻմերէթի և 'ի Գուրիա։ Յայսմ վիճակի կարգին յաջորդք Թեմակալ Առաջնորդի 'ի Գանձակ, 'ի Տայս և յԻմերէթ։ Վիճակին Արցախայ՝ (Ղարաբաղայ) Լուսաւորչական Հայոց Եկեղեցիքն՝ որ 'ի գաւառս յատկապէս Ղարաբաղու, 'ի բաց առեալ զմետրապօլիտութիւնն Տաթեւայ հօտիւն հանդերձ, և Շաքեայ և Թալիշոյ։ Յայսմ վիճակի կարգի յաջորդ Թեմակալ

Առաջնորդի ՚ի շաքի։ Վիճակին շիրուանայ պատկանին Եկեղեցիք լուսաւորչական Հայոց՝ որ ՚ի նահանգս շիրուանայ ղուբայու, բաքւոյ և դարբանդայ։ Յայսմ վիճակի չիք առանձին յաջորդ Թեմակալի։

Ծանօթութիւն։ Գաղթականք Հայոց ՚ի Տաճկաստանէ վերաբնակեալք յաշխարհին Տայոց և գաւառին շիրակայ՝ կառավարին ըստ նախկին սովորութե ՚ի գաղթելոյն ընդ նոսա ՚ի Կարապետ և ՚ի Ստեփաննոս արքեպիսկոպոսացն անկախ ՚ի Թեմակալ առաջնորդաց և անմիջապէս ստորագրեալ Պատրիարգին. իսկ յելանել սոցա յայսոսիկ տեղեաց՝ կառավարութիւն հոգևորական գործոց նոյն գաղթականաց անցցէ հաւասար ընդ ժողովրդոյն Հայոց յիշխանութիւն Թեմակալ Առաջնորդաց. գաղթականքն շիրակայ կողմին վիճակի երևանայ. իսկ գաղթականքն տայոց՝ վիճակին վրաստանի։

Յօդուած. 57։

Զթեմակալ Առաջնորդս լուսաւորչական Հայոց Եկեղեցւոյ ՚ի Ռուսաստան նշանակէ Թագաւոր կայսրն յեկեղեցական աստիճանաւորաց այսր դաւանութե. նոքա կարգին և արձակին բարձրագոյն հրովարտակօք։ ՚ի մտանել նոցա ՚ի պաշտօն՝ երդնուն վասն հաւատարիմ հպատակութեան և ծառայութեան։

Յօդուած. 58։

Լուսաւորչական Հայոց արքեպիսկոպոսունք ՚ի Ռուսաստան են լիակատար հոգևոր Առաջնորդք այսր դաւանութե ՚ի վիճակս յանձնեալս նոցա բարձրագոյն հրամանաւ. և պատասխանատու են զկառավարութենէ նոցին առաջի բարձրագոյն կառավարութե և առաջի հոգևոր իշխանութե իւրեանց։ Նոցա գործակիցին ՚ի կառավարութե գործոց լուսաւորչական Հայոց հոգևոր ատեանք հաստատեալք յիւրաքանչիւր վիճակի։

Յօդուած. 59։

Թեմակալ Առաջնորդք լուսաւորչական Հայոց Եկեղեցւոյ ՚ի սահմանս վիճակի իւրեանց ձեռնադրեն ՚ի զանազան աստիճանս հոգևոր կարգի ըստ կարգաւորութե Եկեղեցւոյ իւրեանց, և ըստ զօրութե կանոնացն՝ որք սահմանեալ են

առ այս 'ի նմա. և նկատեն զի թէ սրբազնագործ և ստորին Եկեղեցական պաշտօնէից մի անցցէ ըստ չափ առանց ստիպօղ հարկի. 'ի վարդապետութիւն ձեռնադրեն նոքա ոչ այլազգ՝ բայց եթէ հրամանաւ Պատրիարգ կաթուղիկոսին էջմիածնի։

Յօդուած. 60։

Թեմակալ Առաջնորդք լուսաւորչական Հայոց Եկեղեցւոյ կարեն արձակուրդ տալ ստորադրեալ Եկեղեցականաց իւրեանց ոչ աւելի քան զամիսս չորս. յառաւել երկարատև արձակուրդս խնդրեն նոքա զհրաման ծայրագոյն Հոգևոր կառավարութեան իւրեանց՝ որ յաղագս ցանկացողացն ելանել արտաքոյ սահմանի տէրութեան՝ առաջի առնէ բարձրագոյն կառավարութեան ըստ հաստատեալ կանոնի։

Յօդուած. 61։

Լուսաւորչական Հայոց Թեմակալ Առաջնորդք պարտաւոր են՝ անձամբ տալով օրինակ բարեպաշտութեան և ամենայն քրիստոնէական և քաղաքական առաքինութեանց՝ ջանադիր լինել ամենայն հնարիւք՝ որք զինքեանց են կախեալ՝ վասն բարեկարգութեան հոգևոր հօտին յանձնելոյ ինքեանց։

Յօդուած. 62։

Նոքա արթնութեամբ դիտեն 'ի վերայ ամենայն գործողութեանց Եկեղեցական վիճակի իւրեանց՝ յորդորելով զնոսա յառաքինական կեանս համաձայն վարդապետութեան սրբոյ Աւետարանի։

Յօդուած. 63։

Լուսաւորչական Հայոց Թեմակալ Առաջնորդք՝ ջանալով վասն հաստատութեան կանոնաց սրբոյ Աւետարանին և տարածութեան բարի վարուց 'ի մէջ Հայոց եղելոց 'ի նոցա յանձնեալ վիճակս՝ 'ի գործ դնեն առ այս զհեզ և զհամաձայն Ճշմարիտ ոգւոյն Քրիստոնէութեան եղանակս խրատուց և յորդորանաց. նոքա պարտաւոր են ըստ մարթելոյ խոյս տալ յայնմ ամենայնէ՝ որ ունի զգոյն աւելորդ խստութեան։

Յօդուած. 64։

Թեմակալ Առաջնորդք լուսաւորչական Հայոց Եկեղեցւոյ պարտաւոր են եթէ ոչ յիւրաքանչիւր ամի, գոնէ յընթացս երից ամաց անգամ մի յայց ելանել վիճակացն՝ բարձ-

բազում հրամանաւ յանձնելոյ ինքեանց. իսկ եթէ բողոք-
վիմք անմարթ իցէ անձամբ լինել զայս պարտաւորութիւն, նք
յանձնեն զայս այցելութիւն Եկեղեցեաց՝ միում առաւել յա-
ռաջի հոգևոր աստիճանաւորաց՝ ստորագրելոյ ինքեանց՝ տա-
լով նմա խրատս պատկանեալս 'ի հրահանգութիւն նորին։

Յօդուած. 65։

'Ի ժամանակի այցելութե վիճակաց նք մտադիր լի-
նին յատկապէս որպիսութե Եկեղեցականաց, վանորէից և
Եկեղեցեաց՝ կարճելով զամ անկարգութիւնս զառ 'ի յին-
քեանց 'ի յայտ բերեալս, և 'ի գործ դնելով հնարս առ 'ի
զառաջս առնելոյ նորոգման նոցին։

Յօդուած. 66։

Թեմակալ Առաջնորդք լուսաւորչական հայոց Եկե-
կեղեցւոյ դարձուցանեն նոյնպէս զճիշդ մտադրութիւն իւր-
եանց 'ի վր որպիսութեանց դպրատանց եղելոց ընդ տեսչութե
վանորէից և Եկեղեցեաց՝ որպէս 'ի հասարակի, նոյնպէս և
մանաւանդ յելանելն նց յայցելութիւն վիճակաց՝ գործակցե-
լով յինքեանց կախեալ միջոցօք վն բարեկարգութե և ճո-
խութե այսոցիկ ուսումնարանաց. նք յաւէտ փոյթ կալցին
յաղագս մուծանելոյ յայս զկանոնաւոր և զհեշտընկալ եղա-
նակս ուսումնատուութե, և յաղագս պահպանելոյ զբարս
վարս յուսուցանողս և յուսանելիս միանգամայն։

Յօդուած. 67։

Թեմակալ Առաջնորդք լուսաւորչական հայոց Ե-
կեղեցւոյ յայց յելանելն վիճակաց՝ վերահասու լինին ամբող-
ջութե գոյից ընդ տեսչութե իւրեանց եղեալ Եկեղեցեաց
և վանորէից։

Յօդուած. 68։

Թեմակալ Առաջնորդք լուսաւորչական հայոց Ե-
կեղեցւոյ զկնի այցելութե ինքեանց հաւատացեալ վիճակաց՝
առաջի առնեն լուսաւորչական հայոց Սինհոդոսին էջմիած-
նի զմանրամասն համար ամ գործոց իւրեանց։

Յօդուած. 69։

'Ի վախճան ամի Թեմակալ Առաջնորդք լուսաւոր-
չական հայոց Եկեղեցւոյ առաջի առնեն հայոց լուսաւորչա-

կան Սինհոդոսին էջմիածնի զընդհանրական համար յաղագս գործոց վիճակայն իւրեանց:

### Յօդուած. 70:

Իւրաքանչիւր Թեմական Առաջնորդ լուսաւորչական Հայոց Եկեղեցւոյ ՚ի մտանել իւրում՝ ՚ի պաշտօն առաջի առնէ Սինհոդոսին էջմիածնի զճիշտ ցուցակ ամ Եկեղեցական գոյից նմա հաւատացեալ վիճակին:

### Յօդուած. 71:

Յետ փոխմանն Թեմական Առաջնորդի լուսաւորչական Հայոց Եկեղեցւոյ՝ թէ մեռանի նա առանց կտակի, և չունի զօրինաւոր ժառանգս, սեպհական գոյք նր դառնան յօգուտ լուսաւորչական Հայոց Եկեղեցեաց այնր վիճակի: Այս հոգացողութիւն յանձնեալ լինի վիճակային հոգևոր ատենից:

---

## ԳԼՈՒԽ. 5:

### Յաղագս լուսաւորչական հայոց հոգևոր ատենից (կոնսիստորեայից) և հոգևոր կառավարութեանց:

### Ա. Յաղագս հոգևոր ատենից:

### Յօդուած. 72:

Յիւրաքանչիւրում լուսաւորչական Հայոց վիճակի գտանի Հոգևոր ատեան (կոնսիստորեայ) այսր դատաւորութե, և բաղկանայ ՚ի չորից անդամոց՝ ՚ի վարդապետէ միոյ և յերից աւագերիցանց կամ ՚ի քահանայից՝ յորում ատենակալ է Թեմական առաջնորդն:

### Յօդուած. 78:

Անդամք լուսաւորչական Հայոց Հոգևոր ատենից նշանակին ՚ի Թեմական առաջնորդաց՝ որք զընտրութե նոցին հասուցանեն ՚ի տեղեկութիւն լուսաւորչական Հայոց Սինհոդոսին էջմիածնի:

### Յօդուած. 74:

Դիւանատունք լուսաւորչական Հայոց վիճակային հոգևոր ատենից բաղկանան յատենադպրէ, ՚ի թարգմանէ, յեկզեկուտորէ՝ որ կատարէ միանգամայն և զպաշտօն գան-

ճապետին՝ և յորխաւարհուած և ՚ի հարկաւոր թուոյ գրագրաց. Այսքիկ աստիճանաւորք կարգին ընտրութեամբ Հոգևոր ատենին և հաստատութեամբ Թեմակալ առաջնորդին: Ատենադպիրն և եկզեկուտորն համարին ՚ի տասներորդում կարգի. իսկ Թարգմանն՝ յերկոտասաներորդում, յորչափ գտանին նոքա յայսոսիկ պաշտամունս, և եթէ չունին ըստ նախկին ծառայութե կամ ըստ պաշտաման զայլ բարձրագոյն աստիճանս:

Յօդուած. 75:

Անդամք Լուսաւորչական Հայոց վիճակային Հոգևոր ատենից և աստիճանաւորք դիւանատանց նոցին ՚ի մտանելն ՚ի պաշտօն իւրեանց՝ ըստ հասարակեալ կանոնի երդնուն վասն հաւատարմութեան ծառայելոյ Նորին Կայսերական Մեծութեան, և խղճութեամբ կատարելոյ զպարտաւորութիւնս իւրեանց:

Յօդուած. 76:

՚Ի քննութիւնս և յընթացս գործոց Լուսաւորչական Հայոց Հոգևոր ատենից պահպանի կարգն սահմանեալ վասն Լուսաւորչական Հայոց Սիւնհոդոսին Էջմիածնի:

Յօդուած. 77:

Առ պարագայս գործողութեան վիճակային Հոգևոր ատենից Լուսաւորչական Հայոց Եկեղեցւոյ՝ վերաբերին:

1. Անմիջական դիտողութիւն ՚ի վերայ ստորագրեալ նոյին սրբազնագործ և ստորին Եկեղեցական պաշտօնէից՝ ամուսնացելոց և կուսակրօնից:

2. Հոգաբարձութիւն զբարեկարգութենէ Հոգևոր դպրոցաց, վանօրէից, Եկեղեցեաց և Ածահաճոյ շինուածոց ՚ի նմին վիճակի եղելոց:

3. Խնամածութիւն այրեաց և որբոց Եկեղեցական պաշտօնէից:

4. Կառավարութիւն կալից ամ ստորադրեալ նոյին վանօրէից և Եկեղեցեաց:

5. Քննութիւն և վճռումն գործոց ըստ գանգատանաց ստորադրեալ նց Եկեղեցեաց և ըստ վիճից նոցին ընդ իրեարս:

6. Քննութիւն և վճռումն գործոց որ վասն պսակաց, բայց միայն առաջարկելով ՚ի վերահասութիւն Լուսաւորչա-

կան Հայոց Սինհոդոսին Էջմիածնի զա՟մ երկբայական դիպ-ուածոց ՚ի մասին ամուսնական գործոց։

7. Թոյլտուութիւն ժողովելոյ զկամաւոր նուէրս յօգուտ ստորադրեալ նոցա լուսաւորչական Հայոց վանորէից, Եկեղեցեաց, դպրոցաց և Ա՟ծահաճոյ շինուածոց, բայց միայն ՚ի սահմանս իւրոյ վիճակին։

8. Թոյլտուութ՟ի ստորանձանց բնակելոյ ՚ի վանորայս որք ունին զիրաւունս առ այն (ըստ յօդ. 94 եր.)

9. Հաստատել զանդամս ՚ի հոգևոր և ՚ի վանքական կառավարութիւնս։

10. Նշանակել զդպիրս ՚ի լուսաւորչական Հայոց Եկեղեցիս։

11. Առաջի առնել Հայոց լուսաւորչական Սինհոդոսին Էջմիածնի յաղագս թոյլ տալոյ ումեք ընկալնուլ զհոգևորական աստիճան, կամ յաղագս մերկանալոյ զայն։

12. Թոյլտուութիւն կառուցանելոյ զԱ՟ծահաճոյ շինուածս և առաջարկութիւն առ լուսաւորչական Հայոց Սինհոդոսն Էջմիածնի յաղագս շինելոյ զնոր վանորայս, զԵկեղեցիս և զդպրոցս։

13. Ունել զճիշտ ցուցակս թուոյ վանորէից, Եկեղեցեաց, դպրոցաց և Ա՟ծահաճոյ շինուածոց, թուոյ կուսակրօն և ամուսնացեալ Եկեղեցականաց և թուոյ ժողովրդոց իւրաքանչիւր Եկեղեցւոյ, և եղելոց ՚ի դպրոցս նոյին ուսուցչաց, աշակերտաց և խնամարկելոյն։

14. Առաջարկել լուսաւորչական Հայոց Սինհոդոսին Էջմիածնի ամի ամի զմանրամասն տեղեկութիւնս զվիճակէ իւրեանց ստորադրեալ վանորէից, Եկեղեցեաց, դպրոցաց և Ա՟ծահաճոյ շինուածոց, զմանրամասն համար զկառավարութ՟ե Եկեղեցական կալից, և զցուցակ ծառայութ՟եց ընդհանրապէս ա՟մ սրբազնագործ և ստորին Եկեղեցական պաշտօնէից իւրեանց վիճակի։

15. Ամսական ստուգութիւն ա՟մ առ ձեռն եղեալ գումարաց և հաշուաթղթոց՝ եղելոց ՚ի հոգևոր ատեանս և որ ինչ ցուցանի ՚ի ստուգութ՟ե անտի, գրել յօրագրութ՟ե։

## Բ. Յաղագս հոգևոր կառավարութեանց։

### Յօդուած. 78։

Հոգևոր կառավարութիւնք՝ որ ՚ի վիճակս ինչ լուսաւորչական Հայոց Ռուսաստանեայ՝ բաղկանան յերից անդամոց՝ ՚ի վարդապետէ կամ յաւագ քահանայէ իբր ՚ի նախագահէ, և յերկուց քահանայից։ Գրաւոր գործք յատուկ կառավարութեանս յանձնեալ ՚ի գրագրէ՝ որ համարի յերկոտասաներորդում կարգի։

### Յօդուած. 79։

Անդամք լուսաւորչական Հայոց հոգևոր կառավարութեանց նշանակին ՚ի Թեմակալ առաջնորդէն. գրագիրք ընտրին և կարգին ՚ի նոյն կառավարութեանց. ՚ի մտանելն ՚ի պաշտօն ամենեքին նոքա երդնուն առ հաւատարիմ ծառայութիւն։

### Յօդուած. 80։

Հոգևոր կառավարութիւնք լուսաւորչական Հայոց Եկեղեցւոյ ստորադրեալ են վիճակային հոգևոր ատենից այսր դաւանութեան. և ոչինչ կարեն կատարել առանց յատուկ առ այն յանձնարարութեան հոգևոր ատենից։

### Յօդուած. 81։

Լուսաւորչական Հայոց հոգևոր կառավարութիւնք ժողովեն ՚ի ստորադրեալ ինքեանց տեղեաց զամենայն հարկաւոր տեղեկութիւնս վասն հոգևոր ատենից այսր դաւանութեան. առաջի առնեն նոցա զխնդիրս մատուցեալս ՚ի մասնաւոր անձանց և զպատկանեալս քննութեան հոգևոր ատենից՝ հանդերձ իւրեանց եզրակացութեամբ, և տան վկայութիւն զչափաբերական քաղուածոյն այսինքն՝ ծնելոց, մկրտելոց, պսակելոց և այլն։

### Յօդուած. 82։

՚Ի լրման ամին՝ լուսաւորչական Հայոց կառավարութիւնք առաջի առնեն հոգևոր ատենից այսր դաւանութեան՝ որում ստորադրեալ են՝ զհաշիւ գործողութեանց իւրեանց. եդեալ ՚ի միասին և զտեղեկութիւնս զեկեղեցականաց. զթուոյ Եկեղեցեաց, զժողովրդոյ, զծնելոց, զմեռելոց և զպսակելոց, նոյնպէս և զհաշիւ ամենայն ստացուածոց Եկեղեցեաց ընդ իշխանութեամբ նոցին եղելոց։

## ԳԼՈՒԽ. 6։

### Յաղագս Մենաստանաց։

### Յօդուած. 83։

Ամենայն մենաստանք լուսաւորչական եկեղեցւոյ Հայոց՝ որպէս արական սեռի նոյնպէս և իգականայն՝ ըստ զօրութե վաղեմի սահմանադրութեց այսր Եկեղեցւոյ՝ վարին կանոնօք սրբոյն բարսղի մեծի։

### Յօդուած. 84։

Ընկալումն ՚ի կրօնաւորութիւն նախընթաց լինի փորձն ունկնդրութե՝ որ կատարի ըստ կարգին սահմանելոյ առ այս կանոնադրութբ լուսաւորչական Հայոց Եկեղեցւոյ։ Թուոյ ունկնդրացն կրկին սեռի չէ պարտ զանցանել քան զսահմանեալ թիւն աբեղայից կամ կուսանաց ՚ի նմին մենաստանի։

### Յօդուած. 85։

Ոչ ոք կարէ նուիրել զանձն ՚ի կրօնաւորութիւն առանց հրամանի լուսաւորչական Հայոց Սինհոդոսին էջմիածնի ըստ առաջարկութեան թեմակալ առաջնորդին։

### Յօդուած. 86։

Ցանկացօղքն նուիրել զանձինս ՚ի կրօնաւորութիւն՝ պարտին լինել երեսուն ամաց և ո՛չ պակաս։ Բացառութք յայսմանէ կարեն թոյլադրիլ ո՛չ այլազգ, բայց եթէ ըստ յատուկ արժանայարգ պատճառաց՝ ըստ զօրութե կանոնաց լուսաւորչական Հայոց Եկեղեցւոյ. բայց սակայն ո՛չ արգելեալ լինի մտանել ՚ի վանս վն փորձոյ ունկնդրութե՝ կանխագոյն քան զերեսուն ամն հասակի։

### Յօդուած. 87։

Առ մտանելոյ ՚ի վանականութիւն և ընդունելոյ զփորձ ունկնդրութեան՝ կարեւոր է նախ համաձայնութիւն այսոցիկ անձանց կամ տեղեաց՝ զորոց կախին ցանկացօղքն վանականութե. հարկատու անձինք ո՛չ կարեն մտանել ՚ի վանականութի, բայց եթէ հրամանաւ կառավարիչ Սինկղիտոսին։

### Յօդուած. 88։

Ամուսնացեալ անձանց թոյլատրի մտանել ՚ի վանականութիւն յայնժամ միայն, յորժամ չունին նոքա զչեռահաս զաւակունս, և երկոքեան ամուսինք յանկան ընդունիլ զկրօնաւորութիւն։

### Յօդուած. 89։

Մտանողքն ՚ի վանականութիւն հրաժարին միանգամայն և ՚ի տիրելոյ անշարժ կալից իւրեանց. և զկնի նուիրմանն ուխտին նորոգ անշարժ սեպհականութիւն կարեն ստանալ, բայց ո՛չ արգելեալ լինի նոցա՝ գնել զայնս յօգուտ Եկեղեցեաց և վանօրէից այնոցիկ՝ յորս են ինքեանք։ Եթէ սոյն տեսակ կալք հասցեն կրօնաւորի ումեք ըստ իրաւանց ժառանգութեան, պարտաւոր է նա տալ կամ վաճառել զայնս ՚ի միջոցի վեց ամսոց։

### Յօդուած. 90։

Վանականաց արգելեալ է տուրևառութիւն ամ վաճառաց, բայց ՚ի վաճառելոյ զսեպհական ձեռագործս իւրեանց, և այն՝ ո՛չ այլազգ, բայց եթէ հրամանաւ կառավարութեան իւրեանց։

### Յօդուած. 91։

Ամենայն շարժական կալք թողեալք զկնի մահուան վանականին՝ պատկանին մենաստանի նորին, եթէ չիցէ նորա արարեալ զկտակ և չունիցի զօրինաւոր ժառանգ։

### Յօդուած. 92։

Կրօնաւորելոյն՝ որոց ըստ զօրութեան կանոնադրութեան լուսաւորչական Հայոց եկեղեցւոյ ներել լինի մերկանալ յինքեանց զկոչումն՝ ՚ի դառնալ նոցա ՚ի քաղաքական վիճակ, թոյլատրի փոխել միայն յիրաւունս պատշաճեալս տոհմի և ծագման վիճակի իւրեանց, առանց դարձուցանելոյ առ նոսա զայնոսիկ առանձնաշնորհութիւնս, զաստիճանս և զպատուանշանս՝ զորս նոքա ստացեալ են ցմտանելն ՚ի վանականութիւն, նոյնպէս և զկալս, թէ զայնս՝ որք հասեալ են նոցա ժառանգութեան, և թէ զայնս՝ զորս վաստակօք իւրեանց ՚ի ձեռս բերեալ էին նախ քան զմտանելն ՚ի կրօնաւորութիւն։

Յօդուած. 93։

Իւրաքանչիւր մենաստանի պարտի լինել միայն սահմանեալ թիւ կրօնաւորեալ անձանց, և յամ դէպս ոչ սակաւ քան զութն անձինս աբեղայից կամ կուսանաց։ Իսկ վասն մենաստանացն այնոցիկ՝ յորս չէ որոշեալ այս թիւ՝ Հայոց լուսաւորչական Սինոդոսն Էջմիածնի ըստ առաջարկութեան վիճակային իշխանութեան կարգեսցէ համեմատ եկամտից նոցին զճիշդ թիւ յայսմ մասին կանոնի։

Յօդուած. 94։

՚Ի լուսաւորչական Հայոց մենաստանս՝ բայց ՚ի սահմանեալ թուոյ կրօնաւորելոյն և ունկնդրողաց արական կամ իգական սեռի՝ կարեն բնակիլ ըստ հրամանի վիճակային իշխանութեան ՚ի վանորայս արականացն՝ զառամեալ և անօգնական սրբազնագործ և ստորին Եկեղեցական պաշտօնեայք առ ՚ի ունիլ զսնունդ և զանդորրութիւն, և որդիք աղքատ սրբազնագործ և ստորին Եկեղեցական պաշտօնէից, մանաւանդ որբք՝ որք կրթեալ իցեն ՚ի սպասաւորութիւն Եկեղեցւոյ։ Իսկ ՚ի վանորայս իգականաց՝ ՚ի ծերութիւն խոնարհեալ անօգնական այրիք՝ աղջկունք հոգևորական կոչմանց, և դեռահաս որբք իգական սեռի ՚ի կրթութիւն և յուսումն արուեստի ձեռագործութեան։

Յօդուած. 95։

Լուսաւորչական Հայոց մենաստանք կախեալ կան անընդմիջաբար և կատարելապէս զվիճակային իշխանութեան այսր դաւանութեան, և պարտական են ՚ի վախճան ամի տալ նմա զմանրամասն համար ամ՟ գործառնութեանց։ Գանգատանք զվանական իշխանութենէ լուսաւորչական Հայոց Եկեղեցւոյ մատուցանին Թեմական Արքեպիսկոպոսին այսր դաւանութեան։

Յօդուած. 96։

Ժողովումն կամաւոր նուիրանաց յօգուտ մենաստանաց լինի յայնմիկ վիճակի, ուր գտանի մենաստանն, և ոչ այլազգ՝ բայց եթէ յիւրաքանչիւր նուագս խնդրելով յատկապէս զհրաման ՚ի վիճակային իշխանութենէ, իսկ յայլ լուսաւորչական Հայոց վիճակս Ռուսաստանի՝ հրամանաւ լուսաւորչական Հայոց Սինոդոսին Էջմիածնի՝ ըստ առաջարկու-

թեան վիճակային իշխանութեան։ Յամ դիպուածս այսոքիկ ժողովարարութիւնք յառաջանան ոչ այլազգ՝ բայց եթէ թոյլտուութբ և քաղաքական իշխանութբ տեղւոյն։

Յօդուած. 97։

Լուսաւորչական Հայոց մենաստանք կառավարին, արականացն՝ ՚ի վանահայր վարդապետաց կամ յաբբայից. իգականացն՝ ՚ի մայրապետաց կամ յաբբասահեաց։ Եւ նոքա և թէ սոքա կարգին ՚ի վիճակային իշխանութէ հաստատութբ Պատրիարգին Էջմիածնի։

Յօդուած. 98։

Վանահարք և մայրապետք լուսաւորչական Հայոց մենաստանաց կառավարեն զգործս նոցին ոչ այլազգ՝ բայց եթէ գործակցութբ կառավարութեանց վանօրէից այսր դաւանութե՝ բաղկացելոց ընդ նախագահութբ վանահարց կամ մայրապետաց յերկուց աւագագոյն նախապատիւ վանականաց կամ կուսանաց, որք հաստատին ըստ առաջարկութե վանահօր կամ մայրապետին ՚ի վիճակային իշխանութէ։

Յօդուած. 99։

Վանահարք և մայրապետք լուսաւորչական Հայոց մենաստանաց ՚ի միասին ընդ վանական կառավարութեանց այսր դաւանութե նկատեն զի ճշտիւ կատարեսցին Եկեղեցական կանոնք և կարգադրութիւնք ՚ի մենաստանս իւրեանց։ Պահպանեն նոքա յամբողջութե զշարժական և զանշարժ կայս մենաստանին և պատասխանատու լինին զկանոնաւոր կիրառութէ եկամտից՝ և ընդհանրապէս զբարեկարգութէ ՚ի նոսա յանձնեալ մենաստանին։

Յօդուած. 100։

Ամենայն մենաստանական եկամտից և ծախուց՝ լուսաւորչական Հայոց վանական կառավարութիւնք պահպանեն զճիշդ հաշիւս՝ զոր ՚ի միասին ընդ ցուցակաւն ամ շարժական և անշարժ մենաստանական գոյից առաջի առնեն ՚ի վախճան ամի ՚ի վերահասութիւն վիճակային իշխանութե։

Յօդուած. 101։

՚Ի մեռանիլ կամ ՚ի փոխիլ վանահօր կամ մայրպետին՝ լուսաւորչական Հայոց վանքական կառավարութիւնք

գործակցութեան ամենայ յերկրագոյն և 'ի նախապատիւ վանականաց կամ կուսանաց առնեն զմանրամասն ցուցակ գոյից վանացն և առաջի առնեն զայն վիճակային իշխանութեանն․ ըստ այսմ տումարի նոր վանահայրն կամ մայրպետն 'ի մտանել իւրում 'ի պաշտօն՝ ընդունի զվանաստանն։

---

## ԳԼՈՒԽ 7․

### Յաղագս ամուսնաւոր Եկեղեցականաց․

### Յօդուած․ 102։

Ամուսնաւոր Եկեղեցականք լուսաւորչական Հայոց Եկեղեցւոյ են նախ՝ աւագ երիցունք, քահանայք, աւագ սարկաւագունք, սարկաւագունք և կիսասարկաւագունք․ երկրորդ՝ դպիրք կամ ստորին Եկեղեցական պաշտօնեայք․

### Յօդուած․ 103։

'Ի կոչումն ամուսնաւոր Եկեղեցականաց լուսաւորչական Հայոց Եկեղեցւոյ կարեն մտանել հրամանաւ լուսաւորչական Հայոց Սինհոդոսին էջմիածնի՝ ըստ առաջարկութե վիճակային իշխանութեն այսր դաւանութե՝ ընդհանրապէս անձինք ամ վիճակի ըստ նախընթաց համաձայնութեան այնորիկ անձանց և տեղեաց՝ զորոց ունին նոքա զկախումն․ Հարկաւ անձինք ո՛չ այլազգ անցանեն 'ի հոգևոր կոչումն՝ բայց եթէ հրամանաւ կառավարիչ Սինկղիտոսին․

### Յօդուած․ 104․

Սրբազնագործ պաշտօնեայք լուսաւորչական Հայոց Եկեղեցւոյ ըստ վաղեմի կանոնադրութե նորին նշանակին 'ի պաշտօն և նուիրին 'ի հոգևոր կարգ 'ի Թեմական Առաջնորդաց այսր դաւանութեն, և 'ի նոցունց ձեռնադրին․ Դպիրք կամ ստորին Եկեղեցական պաշտօնեայք կարգին 'ի պաշտօն ըստ տնօրէնութե վիճակային իշխանութեն, և օրհնութե քահանայի Եկեղեցւոյն 'ի նոյն վերագրին․

### Յօդուած․ 105․

Ամուսնաւոր Եկեղեցականք լուսաւորչական Հայոց Եկեղեցւոյ՝ որոց գլխաւորաբար յանձնեալ է կատարել զածային պաշտամունս 'ի ժողովրդապետական Եկեղեցիս և

վճարել զհոգևոր պէտս աշխարհականաց ՚ի կատարել զայսոսիկ գերագոյն պարտաւորութիւնս պարտուպատշաճ ջանասիրութբ և հսկութբ՝ յայսմ դէպս պարտաւորն են ջանալ հաստատել զժողովուրդս իւրեանց ՚ի ճշմարտութե քրիստոնէական վարդապետութե՝ խրատելով և յորդորելով զնոսա առ բարեպաշտ, համեստ և պատուաւոր կենցաղավարութիւն՝ ոչ միայն յորդորմամբ, այլ և օրինակաւ անձին, և ջանալով խոյս տալ յամէ՝ որ ինչ կարէ տալ պատճառս մեղադրութե նոցա ՚ի ղատարկութե իւրեանց, ՚ի թեթևամտութե կամ յանժուժկալութե։

Յօդուած. 106։

Ամուսնաւոր Եկեղեցական անձանց Լուսաւորչական Հայոց Թոյլատրի տիրել անշարժ կայից ըստ հասարակեաց կանոնաց վս՟ մասնաւոր անձանց. բայց ՚ի ձեռս բերել զգոյս ազնուականաց սեպհական՝ կարեն միայն այնք ՚ի նոցանէ՝ որք ըստ ծագման ազգատոհմութե իւրեանց ժառանգութբ սերին յազնուականութե։

Յօդուած. 107։

Տունք պատկանեալք ամուսնաւոր հոգևոր Լուսաւորչական Հայոց Եկեղեցւոյ՝ յորս բնակին ինքեանք՝ ազատ են ՚ի բնակութենէ ծառայողաց (՚ի Պօստոյէ.) ՚ի գետնահարկէ, և յայլ քաղաքական հարկաց՝ բաց ՚ի նորոգութե սալայատակաց և ՚ի պահպանութե մաքրութե ՚ի փողոցս և ՚ի գաւիթս հաւասար ընդ այլ բնակելոց։

Յօդուած. 108։

Ամուսնաւոր հոգևորականք Լուսաւորչական Հայոց Եկեղեցւոյ ՚ի ձեռն օրինաւոր ամուսնութե հաղորդեն զիրաւունս վիճակի իւրեանց՝ և կանանց իւրեանց, որք զնոյն իրաւունս պահպանեն զկնի մահուան ամուսնոյ իւրեանց, եթէ ոչ զրկեսցին յայնցանէ ըստ դատաստանական վճռոյ. և ոչ անցցեն ՚ի նորոգ ամուսնութիւն ընդ անձին այլոյ վիճակի։

Յօդուած. 109։

Զաւակք սրբազնագործ և ստորին Եկեղեցական պաշտօնէից Լուսաւորչական Հայոց Եկեղեցւոյ վերաբերին առ Եկեղեցական իշխանութիւն և չպարտաւորին ընտրել զայլ

եղանակ կենայ: Յորժամ որդիք Սրբազնագործ պաշտօնէից մտանեն 'ի զինուորական ծառայութիւն, վայելեն նոքա յիրաւունս ինքնակամ զինուորելոյ (վօլնօպրէդելեայուշչի) միայն թէ ասացեալ իցեն զուսմունս գոնեայ 'ի միջին դասատան դպրոցաց կամ յայլ նոյին հաւասար վարժարանս. բայց սակայն այս ամ ոչ տարածի առ որդիս ծնեալս յառաջ քան զմտանելն հարցն 'ի հոգևոր կոչումն: Սոքա մնան յառաջին կոչման իւրեանց և 'ի հարկատուութե. և ոչ համարին ընդ Եկեղեցական իշխանութբ:

### Յօդուած. 110.

Ամուսնացեալ Եկեղեցականք Լուսաւորչական Հայոց Եկեղեցւոյ ըստ յանկութե իւրեանց կարեն արձակիլ 'ի հոգևոր իշխանութե. սակայն ոչ այլազգ՝ բայց եթէ հրամանաւ Լուսաւորչական Հայոց Սինհոդոսին Էջմիածնի՝ ըստ առաջարկութե Վիճակային իշխանութեն. եթէ չէն նոքա յազնուականաց, զնոյն արձակման պարտին ընտրել ինքեանց զեղանակ կենաց ըստ հաստատեալ օրինաց:

### Յօդուած. 111.

Սրբազնագործ պաշտօնեայք Լուսաւորչական Հայոց Եկեղեցւոյ՝ կախին անընդմիջապէս զվիճակային իշխանութե այսր դաւանութե. իսկ ստորին Եկեղեցական պաշտօնեայք՝ զաւագ կամ զերիցագոյն քահանայէ Եկեղեցւոյն. ամ գանգատանք սրբազնագործ և ստորին Եկեղեցական պաշտօնէից մատուցանին առ վիճակային իշխանութիւնն:

---

## ԳԼՈՒԽ. 8.

### Յաղագս հոգևոր դպրոցաց Լուսաւորչական Հայոց Եկեղեցւոյ.

### Յօդուած 112.

Առ 'ի կրթութիւն մանկանց Լուսաւորչական Հայոց Եկեղեցւոյ յածաբանական գիտութիւնս՝ հաստատին 'ի վանս Էջմիածնի և յիւրաքանչիւր Լուսաւորչական Հայոց վիճակս Ռուսաստանի հոգևոր դպրոցք:

### Յօդուած. 113.

Հոգևոր դպրոցն՝ որ 'ի վանս Էջմիածնի՝ կայ ընդ

անմիջական տեսչութեան լուսաւորչական Հայոց Պատրիարքի
Կաթուղիկոսին. իսկ այլ միւս դպրոցք կախին զ վիճակային
իշխանութեանց:

Յօդուած. 114:

Իշխանութիւնք լուսաւորչական Հայոց դպրոցաց՝ որոց
յանձնի կրօնական և բարոյական կրթութիւն մանկանց 'ի նոսին
ուսանողաց՝ պարտաւորին են՝ ըստ վերատեսչութեան և առաջա-
դրութեան Թեմական արքեպիսկոպոսաց համեմատ միջոցաց
առաջի եղելոց՝ պատրաստել զմանրամասն կանոնս վն սահ-
մանելոյ զընթացս ուսման և զմտ՛ ներքին կարգադրութեանս
դպրոցաց առ 'ի առաջի առնել լուսաւորչական Հայոց Սինո-
հոդոսին էջմիածնի: Սինհոդոսն զկնի հասու լինելոյ և
հաւանելոյ այսոցիկ կանոնաց՝ առաջի առնէ զայնս հանդերձ
յինքենէ վն դպրոցին էջմիածնի կարգեալ կանոնադրութե՝
նախարարութեն ներքին գործոց 'ի ձեռն գլխաւոր կառավարչին
վրաստանի՝ կովկասեան: և յայնկոյս կովկասու եղեալ նա-
հանգաց 'ի թիւս առաջիկայից. որք մտանեն 'ի համար ուսման
լուսաւորչական Հայոց դպրոցաց. բայց 'ի հաստատեալ սոր-
հեստից, և այնց՝ որք առաւել կարևորքն են հոգևորական
կոչման՝ պարտին լինել լեզու Ռուսաց և պատմութիւն և աշ-
խարհագրութիւն կայսրութեն Ռուսաց:

Յօդուած. 115:

Յամենայն Եկեղեցիս և 'ի մենաստանս վիճակին՝
յորում է դպրոցն՝ լինի ըստ սովորական կարգի ժողով դրա-
մոց յօգուտ նորին. և ժողովեալ դրամքն յիւրաքանչիւր
երիս ամիս առաքին 'ի կօնսիստօրիայն այնր վիճակի, առ հա-
սուցանելոյ 'ի դպրոցն. բայց յայսմանէ մենաստանք նախանձայոյզ
լինելով առ օգուտ լուսաւորչական Հայոց Եկեղեցւոյ՝ ամի ամի
յեկամտից իւրեանց նուիրեն զառանձին գումարս 'ի կառավա-
րութիւն վիճակային դպրոցաց իւրեանց:

Յօդուած. 116:

Հոգևոր դպրոցք լուսաւորչական Հայոց Եկեղեցւոյ
պարտաւորին են 'ի վախճան ամի առաջի առնել վիճակային
իշխանութեն զմանրամասն համար գործառնութեանց, և զտեղե-
կութիւն զեկամտից և զծախուց իւրեանց և զմնացորդ գումա-
րայն դրամոց:

## ԳԼՈՒԽ. Թ։

### Յաղագս հաստատութեան հայոց լուսաւորչական Եկեղեցւոյ հայոց։

### Յօդուած. 117։

Իւրաքանչիւր շարժական կամ անշարժ ստացուած նախանշանակեալ 'ի պաշտպանութիւն որ և իցէ լուսաւորչական հայոց մենաստանի կամ Եկեղեցւոյ կամ նորին վերաբերեալ ծխահաճոյ շինուածոյ՝ համարի ընդհանուր ստացուած ողջոյն լուսաւորչական Եկեղեցւոյ հայոց։

### Յօդուած. 118։

Որ և իցէ ժողովք դրամոց և նուիրաց Թոյլատրեալք կարգ ըստ վաղեմի սովորութեան՝ յօգուտ լուսաւորչական հայոց Եկեղեցեաց՝ Թոյլատրին և յայսմ հետէ յայնմ վիճակի յորում են Եկեղեցիքն այնոքիկ։ Ժողովարարութիւնք առ այս նպատակ յայլ վիճակս լուսաւորչական հայոց Թոյլատրին ոչ այլապէս՝ բայց եթէ հրամանաւ ծայրագոյն հոգևոր իշխանութեան այսր գաւառութեան ըստ կարգին սահմանելոյ 'ի 96 երորդ յօդուածն՝ որ յաղագս ժողովարարութեանց յօգուտ մենաստանաց։ Յերկոսին յայսոսիկ դիպուածս հարկաւոր է Թոյլտուութիւն տեղական մարմնաւոր կառավարութեան։

### Յօդուած. 119։

Եկեղեցական գլուխ դրամոց տուեալ լինի առ աճումն 'ի ձեռն տոկոսեաց 'ի Թագաւորական կամ 'ի հասարակաց գանձարանս. տուչութիւն այսոցիկ դրամոց 'ի ձեռս մասնաւոր անձանց Թոյլատրի միայն հրամանաւ լուսաւորչական հայոց վիճակային իշխանութեան. և կայ ընդ պատասխանատուութեամբ նորին։ Եթէ այս տուչութիւն համարեսցի յանմայնաւոր և շահաւէտ վասն Եկեղեցւոյ, և եթէ այսու կերպիւ հաւատացեալ գումարն ապահովեալ իցէ հաւատարիմ գրաւականաւ։

### Յօդուած. 120։

Յիւրաքանչիւր լուսաւորչական հայոց Եկեղեցւոյ պարտին լինել ճիշտ և մանրամասն ցուցակք ամ՟ Եկեղեցական անշարժ կայից, անօթոց և այլոց իրաց և դրամոց. նոյնպէս և ամ՟ եկամտից պատկանելոց որ և իցէ իրաւամբք նոյն Եկե-

զելեալ. ևս և օրինաւոր ժապաւինեալ մատեանք վասն մուծանելոյ 'ի նոյնս զմ̃ն եկամուտս և զծախս դրամոց Եկեղեցւոյն։

Յօդուած. 121։

Կառավարութիւն ստացուածոց լուսաւորչական Եկեղեցւոյ Հայոց կախի անմիջապէս զերեցփոխանաց կամ զԵկեղեցպանաց յիւրաքանչիւր Եկեղեցիս եղելոց։

Յօդուած. 122։

Երեցփոխանն կամ Եկեղեցպանն Եկեղեցւոյն ընտրի երամեայ ժամանակաւ 'ի պատուաւորագունիցն 'ի ժողովրդոց։ 'Ի լրանալ երից ամաց կարէ նա 'ի նորոյ ընտրիլ յայս պաշտօն։

Յօդուած. 123։

Նոր Եկեղեցպանն կամ երեցփոխանն 'ի մտանել իւր 'ի պաշտօն՝ պարտական է հասու լինել ամբողջութեան Եկեղեցական գոյից և ընդունել զայն 'ի նախորդէն իւրմէ ըստ զօրութե̃ հարիւր քսաներորդ յօդուածոյս.

Յօդուած. 124։

Վերահասութիւն ամբողջութե̃ Եկեղեցական գոյից՝ կառավարութիւն եկամտից Եկեղեցւոյ, երթևեկութիւն գործոց 'ի պատշաճեալ դատաստանս վս̃ նորին, շինութիւն և նորոգութիւն Եկեղեցական տանց, տուչութիւն այնոցիկ 'ի վարձու, և նմ̃ սոյնպիսիք մտանեն 'ի պարագայս պարտաւորութե̃ց Եկեղեցպանին կամ երեցփոխանին։ Նա ընդհանրապէս կատարէ զպաշտօն իւր իբրև լիակատար գործակալ 'ի կողմանէ ժողովրդեանն. իսկ յերևելի գործս՝ իրաւունս ունի պահպանելոյ 'ի հասարակութե̃ զառանձին թուղթ հաւատարմութե̃ 'ի ներկայութե̃՝ որքան կարելին է՝ բազմաւոր ժողովրդականաց. ընկալեալ զայս թուղթ հաւատարմութե̃՝ նա ըստ այնց գործոյն՝ որք յանուանէ յանձնեցեալ են նմա 'ի մէջ ժողովոյն՝ զերծ է յամ̃ պատասխանատուութենէ առաջի հասարակութե̃։

Յօդուած. 125։

'Ի լրանալ ամի Եկեղեցպանն կամ երեցփոխանն պարտական է առաջի ընդհանուր ժողովոյն հասարակութե̃ տալ զլիակատար հաշիւ ամ̃ գործողութե̃ց 'ի մասին կառա-

վարութե տնտեսական գործոց Եկեղեցւոյն, և մանաւանդ 'ի մասին գանձանակայն սահմանելոց յառանձին արկեղ և ամ առ ամի առնէ զայս հաշիւ իւր՝ Լուսաւորչական Հայոց վիճակային կոնսիստորիային՝ որում և պատկանի։

### Յօդուած. 126։

Եկեղեցպանն կամ երէցփոխանն՝ որ առաւելութե շահեցուցեալ է զմայր գումար Եկեղեցւոյն՝ յորում է ինքն՝ և կամ կատարեալ է զայս պաշտօն զամս ինն անընդմիջահատ առ կատարեալ բաւականութի իւրումն կառավարութե ստանայ այնու զիրաւունս, զի եղիցի առաջարկութիւն 'ի վարձատրութիւն նորին ըստ հասարակեալ կարգին։

---

## ԳԼՈՒԽ. 10։

**Յաղագս եկամտից սրբազնագործ և ստորին Եկեղեցական պաշտօնէից Լուսաւորչական հայոց Եկեղեցւոյ, և յաղագս խնամարկութեան այրեաց և որբոց նոցին։**

### Յօդուած. 127։

Սրբազնագործ և ստորին Եկեղեցական պաշտօնեայք Լուսաւորչական Հայոց Եկեղեցւոյ կառավարին տուրք ժողովրդոց իւրեանց։

### Յօդուած. 128։

Երրեակ ազգք արդեանց կարեն լինել սրբազնագործ և ստորին Եկեղեցական պաշտօնէից. նախ՝ հաստատեալն և սահմանեալն վասն նոցա 'ի ժողովրդենէ 'ի մտանելն նոցա 'ի պաշտօն. երկրորդ՝ տուրքն, զոր ստանան նոքա վասն կատարելոյ զհոգևոր պէտս. երրորդ՝ կամաւոր նուէրք։

### Յօդուած. 129։

Տուրք վասն կատարելոյ զհոգևոր պէտս՝ նշանակին 'ի հետագայդ. Առ փարատելոյ զտուն նորածնի՝ տասն կոպէկ արծաթի։ Առ մկրտութե երեխայի՝ քսան կոպէկ արծաթի։ Առ պսակի՝ քառասուն կոպէկ արծաթի։ Առ թաղման չափահաս անձանց՝ քառասուն կոպէկ արծաթի, և տղայոյն՝ քսան կոպէկ արծաթի։ 'Ի կատարելն զխորհուրդ զղջման, կամ խոստովանութե, և հաղորդութե սրբոյ խորհրդոյ՝ ոչ կար-

գին տուրք ինչ։ Խստիւ արգելեալ լինի սրբազնագործ և ստորին Եկեղեցական պաշտօնէից լուսաւորչական Հայոց Եկեղեցւոյ պահանջել որպէս և իցէ պատճառաւ զտուրս աւելի քան զսահմանեալս յայսմ յօդուածի վասն կատարելոյ զհոգևոր պէտս։

Յօդուած. 130։

Սրբազնագործ և ստորին Եկեղեցական պաշտօնեայք լուսաւորչական Հայոց Եկեղեցւոյ չունին իրաւունս՝ վ՟ն չվճարելոյն առ նոսա զտուրս պատկանեալս ինքեանց ըստ զօրութե՟ Հարիւր քսան և ինն երորդ յօդուածոյն այսր կարգադրութե՟՝ հրաժարիլ ՚ի կատարելոյ զայն. նոքա կարեն միայն խնդրել ՚ի Հոգևոր ատենէ առ ՚ի պահանջել զայնոսիկ տուրս ՚ի ձեռն իշխանութե՟։

Յօդուած. 131։

Ստացեալ տուրքն վ՟ն կատարելոյ զհոգևոր պէտս՝ բաժանին ՚ի մէջ սրբազնագործ և ստորին Եկեղեցական պաշտօնէից լուսաւորչական Հայոց Եկեղեցւոյ համաձայն կարգին՝ որ կայ ցայսօր։

Յօդուած. 132։

Յաղագս խնամարկութե՟ այրեաց և որբոց սրբազնագործ և ստորին Եկեղեցական պաշտօնէից լուսաւորչական Հայոց Եկեղեցւոյ՝ կարգին առանձին արկեղք ՚ի վանս էջմիածնի, և յա՟մ լուսաւորչական Հայոց վիճակս՝ որք են ՚ի սահմանս Ռուսաստանի։

Յօդուած. 133։

Արկեղք վ՟ն խնամարկութե՟ այրեաց և որբոց սրբազնագործ և ստորին Եկեղեցական պաշտօնէից լուսաւորչական Հայոց Եկեղեցւոյ երբև ա՟ծահաճոյ շինուածք՝ ստանան զգլխաւոր եկամուտս իւրեանց ՚ի կամաւոր նուիրանաց բարերարանձանց. բայց յայնմանէ իւրաքանչիւր լուսաւորչական Հայոց վիճակային իշխանութիւն ամի ամի տայ մասն ըստ մարթելոյ յեկամտից վիճակի իւրոյ յաղագս արկեղն սահմանելոյ վասն խնամարկութե՟։

Յօդուած. 134։

Ժողովուածք կամաւոր նուիրանաց վ՟ն արկեղայն խնա-

մարկութեան այրեաց և որբոց սրբազնագործ և ստորին Եկե-ղեցական պաշտօնէից լուսաւորչական Հայոց Եկեղեցւոյ՝ լինի նախ գանձանակօք եղելովք յիւրաքանչիւր լուսաւորչական Հայոց Եկեղեցիս այնր վիճակի՝ որոյ վասն սահմանեալ է արկղն։ Երկրորդ՝ ստորագրութեամբ յառանձին մատենի սահ-մանելոյ առ այս։

Յօդուած. 135։

Կառավարութիւն արկեղաց խնամարկութեան այրեաց և որբոց սրբազնագործ և ստորին Եկեղեցական պաշտօնէից լուսաւորչական Հայոց Եկեղեցւոյ հաստատեալ լինի առան-ձին Հոգաբարձութեան ընդ անմիջական վերատեսչութեամբ վիճա-կային իշխանութեան։ Այս Հոգաբարձութիւն բաղկանայ յերից պատուաւորագոյն անդամոց ուխտի ամուսնացեալ Եկեղե-ցականաց վիճակին՝ ընտրութեամբ թեմակալ առաջնորդին. յան-ձին կալեալ նոյն զպարտաւորութիւն գործակցելոյ առ հասուցման բարերար նպատակին պահպանութեան այսց արկեղաց՝ ոչինչ վարձս ստանան առ այն։

Յօդուած. 136։

Հոգաբարձութիւնն ստանայ զամ ժողովեալ դրամս յօգուտ արկեղաց՝ որպէս ՚ի գանձանակաց, նոյնպէս և ըստ մատենից, և ունի զճիշդ հաշիւ այնոցիկ։

Յօդուած. 137։

Հոգաբարձութիւն նշանակէ այրեաց և որբոց սրբազ-նագործ և ստորին Եկեղեցական պաշտօնէից լուսաւորչական Հայոց Եկեղեցւոյ զօժանդակութիւն ըստ իւրում դիտողու-թեան, բայց ո՛չ այլազգ՝ եթէ ոչ յետ խնդրութեան հասու լինելոյ հարկաւորութեան առանց անձնական շահու և կողմնապահութեան։

Յօդուած. 138։

՚Ի նշանակելն զօժանդակութիւն այրեաց և որբոց սրբազնագործ և ստորին Եկեղեցական պաշտօնէից լուսաւոր-չական Հայոց Եկեղեցւոյ՝ պարտապա՛ն է Հոգաբարձութիւնն պահպանել զյետագայ կանոնս։ Ա. Ջանալ կարգել զհաս-տատուն տարեկան օժանդակութիւնս, խոյս տալով՝ որչափ ինչ մա՛րթ է՝ ՚ի տալոյ զայլ և այլ նուագս օժանդակութիւնս ՚ի միանուագ։ Բ. Զայլ և այլ նուագս օգնութիւնս տալ մի և

նոյն անձին ոչ աւելի քան զմի անգամ յամին։ Զ. Նշանակել զնպաստ առաւելապէս նախ՝ այնց այրեաց և որբոց, որք ՚ի կատարեալ պակասութե՟ սեպհական հնարից ՚ի դարմանել զանձինս՝ չունին և զազգականս, որք կարողք լինեն և բարեյօժարք՝ ՚ի պահպանել զնոսա։ Երկրորդ՝ այնց այրեաց՝ որք գոլով յաղքատ վիճակի՝ ծանրաբեռնեալք են նաև բազմաթիւ ընտանեօք. և երրորդ՝ որոց չունին ոչ զծնողս և ոչ զմերձաւոր ազգականս, և որբոց՝ որք գտանին ՚ի չքաւորութե՟։ Է՟. Տալ զօժանդակութի՟ այրեաց սրբազնագործ և ստորին Եկեղեցական պաշտօնէից՝ միայն ցմտանելն նց՟ ՚ի նոր ամուսնութի՟. որբոց իգական սեռի ցամուսնանալն նց՟. իսկ արական սեռի՝ մինչև ցկատարեալ հասակ նց՟ կամ ցմտանելն ՚ի դպրոց։

## Յօդուած. 139։

Զառողջութե՟ արկեղաց յիւրաքանչիւր ամիս վկայէ հոգաբարձուին ՚ի ներկայութե՟ անդամոյ վիճակային հոգևոր ատենից լուսաւորչական հայոց, կամ ՚ի ներկայութե՟ այլոյ անձին նշանակելոյ առ այս ՚ի հոգևոր ատենէ։

## Յօդուած. 140։

՚Ի վերջ իւրաքանչիւր չորից ամսոյ հոգաբարձութիւնն առաջի առնէ լուսաւորչական հայոց վիճակային հոգևոր ատենին զմանրամասն տեղեկութիւն յաղագս եկամտից, ծախուց և մնացորդ դրամոյն գումարաց, և ՚ի վերջ ամին զհաշիւ վն՟ ամ՟ գործողութեց իւրեանց։

## Յօդուած. 141։

Գանգատանք զգործողութեց հոգաբարձութե՟ն մատուցանին ՚ի քննութիւն և ՚ի վճռահատութի՟ վիճակային լուսաւորչական հայոց հոգևոր ատենին։

Ստորագրեալ Ատենակալ Լուսաւորչական Խորհրդարանին.

ԿՈՄՍ ՆՈՎՕՍԵԼՑՈՎ։

Թարգմանեաց Ատենադպիր և Թարգման լուսաւորչական
հայոց Սինոդոսին էջմիածնի՝ ՄԿՐՏԻՉ ՔԱՐՏԱՇԵԱՆՑ։

# ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ։

(ա) Նորոհրատուրուն՝ (Պրօշէշէլուէշմ) է բառ լատինական. այս վերայեալ անուն ՚ի կիր առի ՚ի Ռուսս և նշանակէ որսալ զայլ յիւր դաւանութիւն։

(բ) Քրէական։ Բառիս քրէական գործք՝ պարտ է իմանալ զայն ոճրագործութիւնս՝ վերաբերեալս արեան դատաստանի. զի մարդասպանութիւն, գողութիւն, աւազակութիւն, ընդդէմ կրօնի, կայսերական օրինաց և այլ սոյնպիսի. որք Ռուսերէն կոչին (Ուգօլովնի) կամ ըստ լատինացւոց կրիմինալ։

(գ) Դէպուտատ՝ է բառ լատինական և նշանակէ ընտրեալ ՚ի գործս աշխարհականաց ընդ հոգևորականաց և զինուորականաց կամ սոյին ընդ հոգևորականաց, կամ ՚ի վէճս ՚ի միասին եկեղեցական կալուածոց ընդ արքունեաց. ընտրի և կարգի ՚ի դատարանս ՚ի կողմանէ հոգևորականաց կամ զինուորականաց՝ յորոց հարկն պահանջէ, վասն ներկայ գտանելոյ ՚ի ժամ քննութեան և վճռոյ գործոյն, առ որ նա նշանակեալ է։ Պարտաւորութիւն է սորա ջատագովել զիրաւունս անձին կամ ատենին՝ յորմէ ընտրեալ է, և ունել զճիշդ նկատողութիւն զի չլիցէ աչառութիւն ինչ յընթացս քննութեան գործոյն. Սա ՚ի ժամ քննութեան ունի զձայն հաւասար միւս դատաւորացն ատենին։

(դ) Չիք ինչ ծանօթութիւն ՚ի ձեռագիր օրինակին։

(ե) Դէպուտատ։ Այս բառս դէպուտատ չունի զայն նշանակութիւն՝ որ ՚ի ծանօթութեան 5. յօդուածոյ, այլ նշանակէ լոկ պատգամաւոր կամ գործակալ կամ վէքիլ։

(զ) Կոնդէպուտատ՝ է բառ լատինական և նշանակէ հաւասար իշխանութեան կամ պաշտօնատարութեան և կամ ընտրեալ։

(է) Թէպէտ ՚ի բնագրին Ռուսաց փոխանակ բառին (շնորհալի) եդեալ է ողորմած, (Միլօսդիվի) բայց որովհետև հոգեշնորհ կաթուղիկոսն մեր Ներսէս՝ շնորհալի

կոչիւր՝ այլ. ո՛չ ուղղման, և կարծելով թէ այս իսկ սխալումն միայն թարգմանչին՝ որ թարգմանեալ է զայս բառ ՚ի Հայոց լեզուէ ՚ի Ռուս՝ ուղղման, ես վստահացայ աստանօր դնել զայն ըստ իսկական նշանակութեան իւրում, որպէս է ՚ի մեր լեզուս. և գրեալ զայս ծանօթութիւն, զի մի՛ ոք մեղադիր լիցի ինձ յանուղիղ թարգմանութեան (Փըրավէրկի) բառին շնորհալի որ ՚ի Ռուս լեզու առի (բըլաղօդարնի) կամ (խալօսէննի բըլաղօդարնի։ )

(Ը) Կոլլէժսկոյ՝ է բառ լատինական և նշանակէ ժողով կամ ատեան. ՚ի հնումն ՚ի Ռուսաստան կոլլեգիայք էին ծայրագոյն ատեանք առաջին աստիճանի զինի կառավարիչ Սինկլիտոսին. այժմ չիք այնպիսիք, և ՚ի տեղի նոցա ունին այժմեան զանազան նախարարութիւնք՝ բայց յիշատականնի կոլլեգիայէն, որ է ծայրագոյն ատեան այլասեռ ազգաց։ Այժմ այս բառ ՚ի գործ ածի ՚ի տեղի որպիսի և իցէ ատենի՝ ուր գործք վճռին ՚ի վր հիման օրինաց։

(Թ) Հօֆռաթ։ Ռուսերէն (պէրէպլէս) բառս այս ՚ի դատաստանական ոճս ՚ի գործ ածի, և նշանակէ զթեքումն ծանրութեան կշռոյ ՚ի մի կողմն. ուստի ուր հակառակ ձայնք անդամոց Սինհոդոսին կամ այլոց ատենի հաւասարին միմեանց, [illegible] չորեքին առն այսպէս և չորեքինն այլազգ՝ յայնժամ ձայն գլխաւոր անդամոյն իբրև ատենապետի վճռէ զդատողութիւն այնորիկ կողման՝ ընդ որ և համաձայն գտցի նորին։

(Ժ) Պրօկուրօր՝ է բառ լատինական և նշանակէ հոգաբարձու կամ խնամակալ. է աստիճանաւոր ծայրագոյն դատաւ կարգեալ յիւրաքանչիւրում նահանգի տէրութեան Ռուսաց. Պարտաւորութիւն է նորա նկատել զի ՚ի դատարանս ճշդութեամբ կատարեսցին օրէնքն և սահմանեալ կարգն օրինաց, ջատագով լինել որբոց և այրեաց և առ հասարակ ամ անձայն դատապարտելոց, և գլխաւորապէս արքունի սեպհականութեանց, և ստիպել զդատարանս ճեպեցուցանել զընթացս դատաստանական քննութեանց։

(ԺԱ) Ինքնայօժար զինուորեալ (վօլնօպրիդէլէայեուշչի). Ինքայօժար զինուորեալք կոչին՝ որք յօժարութեամբ իւրեանց մտանեն ՚ի զինուորական աստիճանս՝ առ որ նշանակեալ

է սահմանեալ ժամանակ ծառայութեն. զայն իրաւունս կար-
են ունել օտարականք՝ որպէս հոգեւորականաց, եթէ չիցեն
յազնուական տոհմէ, և այլն.

Ընչչէնոսօր՝ է աստիճանաւոր կարգեալ յամ ատեանս
Ռուսաց, որ պահպանէ զկարգ դիւանատանց և իրաւարանաց.
Նա և ունի զճիշդ նկատողութիւն զերթեւեկութէ ծառայող
աստիճանաւորաց 'ի դատարանն 'ի սահմանեալ ժամանակին.

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԽԶՄԻԱԾՆԵՑԻ՝

Կոլլէժսքի Սէքրէտար.

# ԳԼԽԱՀԱՄԱՐ.


ԳԼՈՒԽ. 1.

Յաղագս ընդհանրական նշանաց և արտօնու-թեանց լուսաւորչական հայոց Եկեղեցւոյ: Յօդ. 1. 9.

ԳԼՈՒԽ. 2.

Յաղագս Ծայրագոյն Պատրիարքին Իշխ-անութեան. Յօդ. 10. 32.

ԳԼՈՒԽ. 3.

Յաղագս լուսաւորչական հայոց Սիւնհոդոսին Իշխանութեան: Յօդ. 33. 54.

ԳԼՈՒԽ. 4.

Յաղագս Ընտրելոյ առաջնորդաց լուսաւոր-չական հայոց Եկեղեցւոյ: Յօդ. 55. 71.

ԳԼՈՒԽ. 5.

Յաղագս լուսաւորչական հոգևոր ատենից և հոգևոր կառավարութեանց: Յօդ. 72. 82.

ԳԼՈՒԽ. 6.

Յաղագս Մենաստանաց: Յօդ. 83. 101.

ԳԼՈՒԽ. 7.

Յաղագս ամուսնաւոր Եկեղեցականաց: Յօդ. 102. 111.

ԳԼՈՒԽ. 8.

Յաղագս հոգևոր դպրոցաց լուսաւորչական հայոց Եկեղեցւոյ: Յօդ. 112. 116.

ԳԼՈՒԽ. 9.

Յաղագս կառավարութեան կայից լուսաւոր-չական Եկեղեցւոյ հայոց: Յօդ. 117. 126.

ԳԼՈՒԽ. 10.

Յաղագս եկամտից որքաղանագործ և ռոճկեն Եկեղեցական պաշտօնէից լուսաւորչական հայոց Եկեղեցւոյ, և յաղագս խնամա-կալութեան այրեաց և որբոց նոցին: Յօդ. 127. 141.


[library stamp]